

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայկական հարցը հայոց պատմական ճակատագիրն է: Ծնունդ առնելով հայ ժողովրդի կազմաւորման հետ միաժամանակ՝ այն անցել է դարերի փորձութիւնների միջով եւ ձեւաւորուելով իբրեւ կոռ ուսմունք՝ դարձել հայ ազգային գաղափարախօսութեան հիմքը:

Իւրաքանչիւր ժողովրդի պատմութիւն.. ունի իր գերխնդիրը: Պատմականօրէն ձեւաւորուած այս երեւոյթը բնականոն լուծում է ստանում այն պարագայում, երբ ժողովուրդն ապահովուած է իր գոյութեան պահպանութեան հզօր միջոցով՝ պետականութեամբ, որը հնարաւորութիւն է տալիս լուծել ոչ միայն գերխնդիրը, այլեւ բացառել մարդկային ու տարածքային կորուստները: Այդ պայմաններում համաչափօրէն ձեւաւորում եւ ամբողջանում է նաեւ պետականութեան հիմքը՝ ազգային գաղափարախօսութիւնը:

Այն ժողովուրդները, որոնք կրել են պատմութեան դաժան հարուածները, կորցրել են պետականութիւնը, զրկուել են նաեւ ազգային գերխնդիրը լուծելու հնարաւորութիւնից: Այդ ժողովուրդներին բաժին է հասել գոյապահպանութեան դժուարին խնդրի լուծումը:

Հայ ժողովուրդը պատկանում է այդ ժողովուրդների թուին: Իր բազմադարեայ պատմութեան ընթացքում հայ ժողովուրդը ազգային գոյապահպանութեան համար պայքարել է մի քանի ճակատներով եւ անողոք ժամանակներում, ճնշման ու հալածանքների, կոտորածների ու գաղթի պայմաններում աւարտուն տեսքի բերել ազգային գաղափարախօսութիւնը:

Հայոց պատմութեան տարբեր ժամանակահատուածներում ձեւաւորուեցին ազգային գաղափարախօսութեան բաղկացուցիչ մասերը՝ Հայրենիք, ազգային ու պետական մտածողութիւն հասկացութիւնները, դրանց հանրագումար Հայկական հարցը, որը ազգային գաղափարախօսութեան հիմքն է:

Հայ պատմագիտութեան տարբեր սերունդների ներկայացուցիչներ են անդրադարձել Հայկական հարցին: Սակայն, դժբախտաբար, հայ ժողովրդի հերոսական ոգորումների հանրագումար խնդիրը չի ենթարկուել գիտական խորը ուսումնասիրութեան, ինչը դարձել է հրամայական պահանջ, որովհետեւ անհրաժեշտութիւն է դառնում ազգային գաղափարախօսութեան բարձրակէտի՝ քաղաքական հայագիտութեան խոր ու բազմակողմանի մշակումը, որը ոչ միայն քաղաքական աշխարհաճանաչման, արտաքին քաղաքականութեան հիմքն է, այլեւ հայոց պետականութեան դիւանագիտական գործունէութեան մարտավարութեան ու ռազմավարութեան բանալին, մի հզօր գործօն, որը եթէ ոչ բացառում, ապա նուազեցնում է սխալուելու հաւանականութիւնը:

Հայկական հարց անուանումը թէեւ պատմական գրականութիւն մուտք գործեց 19-րդ դարի 70-ական թուականներին, բայց բովանդակութեամբ ու խնդիրներով սկիզբ է առնում Հայոց պատմութեան ակունքներից:

19-րդ դարի առաջին կեսին սկսուեց յոյն ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնատիրութեան դէմ: Եւրոպական տէրութիւնները 1822թ. Սրբազան դաշինքի վերոնայում գումարուած կոնգրէսում քննութեան առան այդ հարցը, ծնունդ տալով «Արեւելեան հարց» հասկացութեանը, որի բաղկացուցիչ մասն էլ յետագայում դարձաւ Հայկական հարցը:

Հայ պատմագիտութեան տարբեր սերունդների ներկայացուցիչներ, հասարակական, քաղաքական գործիչներ անդրադարձել են Հայկական հարցի ծագման ուսումնասիրութեանը, ջանալով վերջնական տեսքի բերել հիմնահարցի սկզբունքային, առաջնային հիմնախնդիրը:

Վ. Շահրիմանեանը իր երկհատորանոց ուսումնասիրութեան առաջին հատորում Հայկական հարցը բնորոշում է այսպէս. «Պիտի հասկնամք այն պաշտօնական հարցը, որ նախ՝ քաղաքական կերպարամբ մը ստացաւ Օսմանեան Պետութեան եւ Հայ Ազգի մէջ սահմանափակուած, եւ յետոյ՝ միջազգային խնդիր մը դարձաւ՝ դաշնադրութեանց զօրութեամբ»¹:

¹ ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ Վ., Հայկական խնդրի ծագումը, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 9:

Ասել է, հեղինակը Հայկական հարցի ծագումը տեղակայում է 15-րդ դարում, իսկ միջազգայնացումը՝ 19-րդ դարում, անյայտ թողնելով թե՛ ո՞ր դաշնադրութիւնը նկատի ունի: Պէտք է կռահել, որ Վ. Շահրիմանեանը նկատի ունի 1878թ. Բեռլինի վեհաժողովը, որով Հայկական հարցը արժանացաւ միջազգային ճանաչման:

Բ. Իշխանեանը նոյնպէս Հայկական հարցի ծագումը կայում է 1878թ. հետ. «Շուտով կը լրանայ 30 տարին սկսած այն օրից (1878թ. Բեռլին կոնգրէս), երբ Արեւելեան խնդրի մի հատուածը, «Հայկական Հարց» ասածդ, կնքուեց միջազգային դիւանագիտութեան աւագանում 61-րդ չարաքաստիկ յօդուածով եւ սանկցիա ստացաւ մեծ պետութիւններից»: Շարունակելով իր մեկնաբանութիւնները, Բ. Իշխանեանը Հայկական հարցի մինչ 1878թ. անուանում է «պաշտօնական հովանաւորութեան» շրջան, յետեւում ինքեանը՝ «միջազգային իրաւունքի» տարածման, երբ սկսուեց «անպտուղ յայտերի, դատարկ խոստումների, աննպատակ ոգեւորութեան, վերամբարձ իլլիւզիւների» տեւական շրջանը²:

Ամենայն հայոց բանաստեղծը՝ Յովհաննէս Թումանեանը անդրադառնալով Հայկական հարցի ծագմանն ու բովանդակութեանը, պատասխան է տալիս ժամանակակից ուսումնասիրողների այն կարծիքին, թէ իբր Հարցը գոյութիւն ունի «Բեռլինի դաշնադրութեան օրից»:

- Երեւակայեցէ՛ք թէ քան տարի է, ինչ ծանօթ է՛ մի նշանաւոր մարդու, դրա համար էլ ձեզ համարում են քան տարեկան, մինչդեռ 50 կամ 60 տարեկան է՛ դու:

Սրա նման մի բան է, որ սովորաբար ասում են 35 տարի է ինչ գոյութիւն ունի Հայկական հարցը, որովհետեւ 35 տարի է, որ դրուած է եւրոպական դիւանագիտութեան առջեւ եւ էդ էլ հաշւում են Բեռլինի դաշնադրութեան օրից:

Մի հիմնական սխալ, որ մարդկանց մտածողութիւնը սահմանափակելով էս 35 տարուայ ժամանակի ու դէպքերի շրջանակում, պատճառ է դառնում շատ սխալների:

Սակայն եթէ ազատուենք էդ մեծ սխալից, հարցին նայենք աւելի մեծ տարածութեան վրայ, հեշտ էլ կը փանաչենք նր-

² ԻՇՊԱՆԵԱՆ Բ., «Տանկահայ խնդիրը եւ միջազգային դիպլոմատեան», Թիֆլիս, 1907, էջ 13-14, 32:

րա բնաւորութիւնը, աւելի յաջող էլ կը մօտեցնամք նրա բանական ու բնական լուծման հնարաւորութեանը:

Եւրոպական դիւանագիտութեան համար, այո 35 տարի է, ինչ որ գոյութիւն ունի Հայկական հարցը, բայց մեզ համար եղ հո եղպէս չի, 35 տարի չի, ինչ որ գոյութիւն ունի նա:

Երկրորդն էլ մեր հարցը Բեռլինից չի սկսուում եւ եւրոպական պետութիւնները չեն դրել, այլ Սան-ստեֆանոյից է սկսուում եւ ոռուսներն են առաջին անգամ Հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը³: (*Ընդգծ.- Յովհ. Զատիկեան*)

Դէմ գնալով նման կարծիքներին, Յ. Թումանեանը սահմանում է նաեւ Հարցի ծագման, աւելի ճիշտ, միջազգայնացման ժամկէտը: Ապա անցնելով «նրա բնաւորութեան» ճշգրտմանը, գրում է, «Հայկական հարցը շատ է հին: Իր ամբողջութեամբ նրան մեզանում բէրն են ծանօթ ու տեղեակ»: Հին ու քաղաքական, անջատողականութեան գաղափարից հեռու, շատերին անծանօթ այդ հարցը, որին քաջածանօթ են Եւրոպայում, Ռուսաստանում ու Թուրքիայում, ի՞նչ «բնաւորութիւն ունի» նա իր սկզբնական շրջանում գուտ քաղաքական խնդիր էր եւ հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախութիւնը, «Բայց ժամանակի ընթացքում ջախջախուեցին նրա ուժերն ու յոյսերը ու իջնելով պարսկական ու տանկական բռնակալութեան տակ պահանջը հասաւ միմիւրումի: Եւ էսօր նա հանդէս է գալիս արդէն լոկ որպէս քաղաքացիական ազատութեան խնդիր կեանքի, գոյքի, պատուի եւ կուլտուրական զարգացման պահանջ»⁴:

Ներկայացնելով Հայկական Հարցի զարգացման փուլերը, Յ. Թումանեանը, սակայն, դրանով չի սահմանափակուում եւ փորձում է ճշգրտել Հարցի ծագման ժամանակը: Պատասխանելով իր իսկ առաջ քաշած՝ «...որտեղի՞ց եւ ո՞ր օրից գոյութիւն ունի հայկական հարցը» հարցին, գրում է. «Էն օրից, ինչ որ վտանգուել է հայ ժողովրդի կեանքը, գոյքը, պատիւն ու կուլտուրական զարգացումը», այսինքն՝ երբ հայը կորցրեց իր պետա-

³ ԹՈՒՄԱՆԵԱՆ Հ., ԵԼԺ, Կ. 7, Երեւան, 1995թ., էջ 8:

⁴ Նոյն տեղում:

կանութիւնը եւ կանգնեց վտանգներին դէմ յանդիման: Դժբախտաբար մեծ բանաստեղծը չի նշում ժամանակահատուածը, սակայն ասուածը բաւական է, որ ստեղծուի ընդհանուր տրամադրութիւն Հարցի ծագման ժամանակաշրջանի առթիւ:

Սկսած 1898 թ., մինչեւ իր վախճանը, Հայկական հարցը դարձաւ ՀՅ Դաշնակցութեան հիմնադիրներին մէկի՝ Քրիստափոր Միքայէլեանի գործունէութեան հիմնական նպատակը: Կատարելով կուսակցութեան երրորդ Ընդհանուր ժողովի որոշումը՝ մեծ նուիրեալը 1898թ. աշնանից իր գործունէութիւնը ծաւալեց Եւրոպայում, խմբագրեց «Դրօշակ» թերթը, նրա շուրջը համախմբեց հայրենի եւ օտար հայնպաստ բոլոր ուժերը՝ նպատակ ունենալով Եւրոպայում ձեւաւորել հասարակական կարծիք, որ նըպաստելու էր Հայկական հարցի բարձրացմանը:

Բեռլինի կոնգրէսից յետոյ, յատկապէս 1880 թ., սուլթանն ուղիներ էր փնտրում Հայկական հարցը լուծելու համար, որովհետեւ կայսրութիւնում գոյութիւն ունեցող միակ հարցն էր, որն առաջ էր բերում եւրոպական միջամտութիւն: Այստեղից էլ՝ մի կողմից Եւրոպան, իր ոչ գործնական դիրքորոշմամբ, միւս կողմից էլ սուլթանական բռնատիրութիւնը՝ իր հայակուլ քաղաքականութեամբ, ստեղծում է «մի խոշոր դիլեմա»՝ «կամ անպայման քննաքննում իրրել մի ամբողջութիւն, իրրել մի ազգութիւն, իրրել մի հայրենիքի տէր ժողովուրդ, կամ թէ դիմադրութիւն՝ կեանք, պատիւ, ստացուածք, տուն, հայրենիք, ամէն ինչ բռնաբարող ուժի դէմ»⁵: Միջին ճանապարհ չկայ, ոչ մշակութային ազդեցութիւնը, ոչ բարենորոգումները չեն ունենալու այն ազդեցութիւնը, որ ապահովեն հայութեան գոյութիւնը կամ մասնակի լուծում տան Հայկական հարցին:

61-րդ յօդուածն անուանելով «Ժամանակակից Եւրոպայի մակատին հրեշաւոր դաւաճանութեան յաւիտեանական արատ», պատմական այդ անարդարութիւնը շտկելու միակ միջոցը համարելով հայ յեղափոխութիւնը՝ Ք. Միքայէլեանը յոյս էր յայտնում, որ միայն հայ յեղափոխականն է ընդունակ «Պալսից մինչեւ Վան, Ռուսաստանից մինչեւ Ամերիկա ցնցել հայութեանը՝ բոլորի սրտին միեւնոյն զարկը հաղորդելով»⁶:

⁵ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ք., Ամբոխային տրամաբանութիւն, Ժնեւ, 1903, էջ 45:

⁶ Նոյն տեղում:

19-րդ դարի երկրորդ կեսին բորբոքուած սոցիալական հալածանքները, արեւմտահայութեան տառապալից վիճակն իր վրայ էր բեւեռել հայ հասարակական-քաղաքական ողջ միտքը: Տարբեր հայեացքների տէր գործիչներ իւրայատուկ լուծումներ էին տալիս Հայկական հարցին, ներկայացնում ազատագրութեան հասնելու ուղիներ, հիմնադրում իրենց առաջադրած կողմնորոշումները: Ա. Արփիարեանը (Հայկակ) ռուսական կողմնորոշումը դիտելով միակ փրկարար ուղին՝ Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքից առանձնացնում էր ցարիզմի գաղութային, հայահալած քաղաքականութիւնը՝ բաժանման գիծ դնելով նրա եւ ռուս ժողովրդի միջեւ, որի համակրանքը շահելու համար առաջարկում էր «ամէն միջոցի գործ դնում»⁷:

Դէմ դուրս գալով պոլսահայ քսակատէրերի ու պետական պաշտօնեաների այն մտայնութեանը, թէ Հայկական հարցի, Հայաստանի ազատագրութեան յոյսերը պէտք է կապել Անգլիայի հետ՝ Ա. Արփիարեանը գրում էր. «Անգլիոյ պաշտպանութեամբ եւ թիւրքաց ձեռքով քարեկարգութիւն յուսալը մի utopie է»⁸:

Հայկական հարցի լուծումը քննելով տէրութիւնների տնտեսական ու քաղաքական նկատառումների հայեցակէտից՝ Ա. Արփիարեանը յանգում է այն եզրակացութեանը, որ «մենք աւելի յոյս ունենք Ռուսիայի, քան թէ այլ տէրութեան պաշտպանութեան վրայ»⁹:

Ժամանակաշրջանի գործիչներից առանձնանում էր Յ. Սուաճեանը:

Հայկական հարցի, հայրենիքի ազատագրութեան հզօր գործօն ճանաչելով միաբանութիւնը, Յ. Սուաճեանը երազում էր այն օրը, երբ հայութեան երկու հատուածները եթէ ոչ քաղաքականապէս, ապա հոգեկան մերձեցման կը հասնեն, երբ «օր մը աշխարհ տեսնէ, թէ հայ ազգ մը կայ, որ թէւ ջրուած ու աստանդական, այլ մի քարոյապէս ու անբաժանելի»¹⁰:

Մեծ վիպասան Րաֆֆին հայ ժողովրդի ազատագրութիւնը, Հայկական հարցի լուծումը կապում էր զինուած պայքարի հետ:

⁷ ՍՏԵՓԱՆԵԱՆ Գ., Արփիարեան Արփիար, Երեւան, 1955, էջ 64:

⁸ Նոյն տեղում, թիւ 42:

⁹ Նոյն տեղում:

¹⁰ ՍՈՒԱՃԵԱՆ Յ., Հրապարակախօսութիւն, Երեւան, 1960, էջ 140:

Հայերը, գրում էր Բաֆֆին. «սլաւոնական ցեղերի մամն պետք է գեմք առնեն» եւ «պատերազմի դաշտում վնասներ են կրեց Կատարի, իսկ եթէ ընդունակ չեն այդ անելու, ուրեմն կը շարունակեն իրեն ոչինչ չտուող աղերսամեքների փաղափակումը, գրաւոր արտայայտելով իրենց բողոքը, այդպէս պաշտպանելով «իրենց իրաւունքները մարդկութեան առաջ»։ Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է դաստիարակել «ասպարէզ դուրս եկող հերոսներ», հեռատես ու քաղաքագէտ առաջնորդներ, յոյսերը կտրել Լոնդոնից ու «Մոսկովից», յենուել սեփական ուժերի վրայ։ Քննադատելով արեւմտահայ հոգեւոր ու աշխարհիկ գործիչներին, նրանց անմիաբանութիւնը, նրանց դեսպանների ու սուլթանի փէշապահութեամբ զբաղուելը, վիպասանը բոլոր ուժերին կոչում է միասնութեան, ազգային կենտրոնի ստեղծման, որն ընդունակ կը լինի բուժել ժողովրդի վէրքերը։

Ազատագրութեան, Հայկական հարցի լուծումը կապելով ժողովրդական լայն զանգուածների զինուած պայքարի հետ՝ Բաֆֆին յիշեցնում էր, որ հայութեան սրտում երբեք չի մարում «հայրենասիրութեան կայծը, բաւական է փչել նրա վրայ եւ ահա նա կը բորբոքուի կը բոցավառուի»¹¹։

Յ. Պարոնեանը խորհրդածելով դիւանագիտական խաղերի, Բեռլինի կոնգրէսի, Անգլիայի դաւադիր քաղաքականութեան ասպետ լորդերի դիրքորոշման մասին, ժողովրդին յայտնելով ճշմարտութիւնը, միաժամանակ զգուշացնում էր, որ նրանց գործունէութեան հիմքում ընկած է ոչ թէ այս կամ այն ժողովուրդի իրաւունքի պաշտպանութիւնը, այլ շահը, խաբէութիւնը, դաւը։ Կծու ծաղրանքի ենթարկելով Գլադստոնի երկերեսանի գործելակերպը՝ երգիծաբանը գրում էր.

-Աստուածդ սիրես, շիտակ գրուցէ, պարոն կլատսթոն, սա պուլիտարաց վրայ հրատարակած տետրակից ֆանի^o հազար ոսկի վաստակեցար», ապա յայտնելով, որ Գլադստոնը յունական ազատագրական շարժման մասին եւս մտադրութիւն ունի «տետրակ» տպագրել՝ խորհուրդ է տալիս մի գրքոյկ էլ գրել Հայերի մասին, որի նիւթերը պարտաւորում էր ինքը ուղարկել¹²։

¹¹ ՐԱՖԻՍԻ ԵԺ, 4.6, Երեւան, 1956, էջ 136։

¹² ՊԱՐՈՆԵԱՆ Ե., ԵԺ, 4. 4, Երեւան, 1965, էջ 104։

Անարգանքի սիւնին գամելով Եւրոպական տէրութիւնների արեւելեան քաղաքականութիւնը՝ Յ. Պարոնեանն այն միտքն էր տարածում, որ նրանց օգնութեամբ երբեք չի լուծուի Հայկական հարցը: Ո՛չ Եւրոպան կը ստիպի Թուրքիային իրագործել բարենորոգումները, ո՛չ էլ այդ ուղղութեամբ սուլթանը որեւէ քայլ կը ձեռնարկի: Եւրոպայի թղթէ արշաւները նկատի ունէր երգիծաբանը, երբ գրում էր. «Ես ալ այսօր որոշումս տուի Հայաստանի նկատմամբ: Ինքնօրինութիւն տուի Հայաստանին: Գնա՛ առ, եթէ կարող ես»¹³: Այսինքն՝ որոշումները թողլի՞ զբաղեցնելու համար են, ոչ թէ պարտաւորութիւն Թուրքիայի համար: Որոշումները տէրութիւնների «անհանգստութեան» արտայայտութիւններն են, որ Եւրոպան արեւելեան ոչ մի ժողովրդի, այդ թւում նաեւ հայ ժողովրդին, երբեք առանց արեան փոխհատուցման ազատութիւն եւ անկախութիւն չի բաշխի:

Ազգին ազատագրութեան ոգով կրթելու հարցերն անհանգստացնում էին նաեւ Ղ. Աղայեանին: Այդ գործում նա կարեւոր դեր էր յատկացնում նաեւ մամուլին: Բայց, դժբախտաբար, արձանագրում էր Ղ. Աղայեանը, նրանցից շատերը արտայայտում են միայն այս կամ այն տեսակէտները, պայքարում են միմեանց դէմ, մոռանալով, որ գլխաւոր խնդիրը ազգի արթնացումն է¹⁴:

Հայկական հարցի լուծման, արեւմտահայութեան ազատագրութեան Պատկանեանական գաղափարներն իրենց վճռորոշ դերն ունէին ինչպէս ժամանակակից, այնպէս էլ ապագայ գործիչների ռազմավարութեան ձեւաւորման վրայ:

Ք. Պատկանեանին 1875թ. նոյեմբերի 10-ին գրուած նամակում Ռ. Պատկանեանը յայտնում էր ազգի փրկութեան ուրիշ, «իսկապէս փրկաւետ, ժողովրդական» ճանապարհի մասին: Դէմ դուրս գալով տարածուած այն գաղափարին, թէ ազգի միակ փրկութիւնը կրթութիւնն է, բանաստեղծը գրում էր. «Միթէ՞ Գարիբալդին նախ կրթեց իւր աւագականման զինուորներին եւ ապա ազատեց ազգը»¹⁵:

¹³ Նոյն տեղում, էջ 388:

¹⁴ Ա.ՂԱՅԵԱՆ Ղ., Մի երես մեր նորագոյն պատմութիւնից, Մոսկուա, 1891, էջ 4:

¹⁵ ՊԱՏԿԱՆԵԱՆ Ռ., Երկեր, հ. 6, Երեւան, 1970, էջ 436:

Ազգի փրկութեան հիմնական նախապայման ընդունելով ազգային ինքնազիտակցութեան բարձրացումը, ազգային զարթոնքը, Ռ. Պատկանեանը ցաւով նշում էր, որ «հայերու մէջ դեռեւս ազգային խնդիրը կենդանութիւն ստացած չէ, նա միայն մի քանի ազնիւ մարդոց սրտերում մէջ միայն խլրտում է»¹⁶:

Ռ. Պատկանեանը մի առանձին կրթոտութեամբ էր խարազանում Եւրոպայի հետ յոյսեր կապողներին: Յիշեցնելով Եւրոպայի բազում ապերախտութիւնները՝ բանաստեղծը այն հաստատ համոզմունքն էր յայտնում, որ ազգային գերխնդիրը՝ Հայկական հարցի լուծումը, իրականացնելու է ինքը՝ ժողովուրդը, եւ «Դարբնի երգը» բանաստեղծութիւնով խոփը սրով փոխարինելու կոչ անելով՝ ազատագրական մարտերի էր հրաւիրում լայն զանգուածներին¹⁷:

Ժամանակաշրջանի մասին ամբողջական պատկերացումները, ազատութեան հասած ժողովուրդների պայքարի ձեւերի քաջ իմացութիւնը Մ. Նալբանդեանին դարձրեցին հայ ազատագրական պայքարի ծրագրաւորողն ու ազատութեան լուսաբացը կանխատեսողը:

- Աստուած ինձ գրկելով ամէն արժանաւորութիւնից՝ տուել է մի կրաւոր գագաթումս սէր հայրենաց, որ այնպէս է միացել իմ էութեան հետ, որ մի օր չի մտածել հայի օգտին, մի օր չի ցաւել նորա թշուառութեանը, մի օր չի մտածել նորա ապագայի վերայ, ինձ համար մահ է...ինչեր չէր բերել զոհ նորա համար¹⁸:

Հայոց հոգեկան միասնութեան գոյացման հիմնական նախապայմաններից մէկը համարելով լեզուն, նրա հարթեցումը՝ Մ. Նալբանդեանը գտնում էր, որ հայութեան երկու հատուածներին հարազատ դարձնելու գործընթացը պէտք է սկսել «Ադամայ լեզու» անուանուող գրաբարի մաքրումից:

Մ. Նալբանդեանը յաջորդ հոգան ազգային միաբանութեան ստեղծումն էր, որի պատճառով հայ ժողովուրդը դուրս է մնում «մարդկութեան պատմագրքի տախտակներից», զրկւում պատմական բնաւորութիւնից, ազգային գիտակցութեան զաղափարից:

¹⁶ Նոյն տեղում, էջ 455:

¹⁷ ՊԱՏԿԱՆԵԱՆ Ռ., ԵԺ, Կ. 1, Երեւան, 1963, էջ 113:

¹⁸ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ Մ., Երկեր, Կ. 2, Երեւան, 1948, էջ 264:

Վեր հանելով համազգային հոգեբանութեան վերափոխման խնդիրը, Մ. Նալբանդեանը քննադատական խօսքեր էր ուղղում բոլոր նրանց, ովքեր հպարտանում են անցեալի դափնիներով: Իսկ ներկան զաւեշտալի է: Հայութիւնը կորցրել է պայքարի ոգին եւ Արարատից մինչեւ Տաւրոս լսում են միայն հեկեկոցի ձայներ:

Ազատագրութեան հասնելու միակ ճանապարհը, ուսուցանում էր Մ. Նալբանդեանը, համընդհանուր զինուած պայքարն է. «Յառաջ...այնտեղ միայն կարող էի հանդիպել մեր ազգի կենսայորդ եւ որոտընդոտ յարութեան»¹⁹:

Մ. Նալբանդեանի ազատագրական գաղափարախօսութիւնն իր շուրջը համախմբեց հայութեան երկու հատուածների առաջադէմ քաղաքական գործիչներին, որոնք խորհրդանիշ ընդունելով հրապարակախօսի մտածողութիւնը, սկսած 1862թ. Զէյթունի հերոսամարտից, դարձան ժողովրդին ազատագրութեան ճանապարհ դուրս բերող անձնագոհ առաջնորդները:

Հայ ազատագրական շարժման ու նրա գաղափարախօսների շարքում իր ուրոյն տեղն ունի հայոց ցաւերի կենդանի վկայ Մ. Խրիմեանը: Կանգնած լինելով արեւմտահայ ազատագրական շարժման ակունքների մօտ՝ Մ. Խրիմեանը, կապուած տէրութիւնների ու սուլթանի խոստումների հետ, թէեւ ունեցել է տարակարծութիւնների ու ոգեւորութիւնների շրջան, բայց Հայկական հարցի նկատմամբ պատնէշաւորուած սրտերի հետ առաջին իսկ հանդիպումներից յետոյ յանգեց այն եզրակացութեանը, որ բոլոր խոստումներն ու բարենորոգումների հրահանգներն ունեն նոյն անտարբերութեան ոգին եւ ծառայում են մէկ նպատակի՝ սեփական շահի պաշտպանութեանը:

Բեռլինի կոնգրէսը նոր շրջադարձային փուլ հանդիսացաւ Մ. Խրիմեանի համար: Դէպի գաւառ, դէպի հայութեան բնօրրանը: Գաւառում է լուծուելու Հայկական հարցը եւ ոչ թէ Պոլսի դիւանագիտական շրջանակներում, կամ Բեռլինում: Եւրոպայից Մ. Խրիմեանը բերեց երկաթի փիլիսոփայութիւնը, պայքարի յանդուգն ոգին, ազատագրութեան փարոս դրեց Վարազայ վանքի, Սիփանի ու Նեմրութի, Արարատի ձիւնածածկ գագաթներին եւ գաւազանը ձեռքին Պոլսից մինչեւ Վան, էջմիածին, յորդորներ ու կանչեր յղեց, ազատագրութեան նոր ոգորումների կոչեց

¹⁹ Նոյն տեղում, էջ 41:

ընչազուրկ ու չղթայակապ իր ժողովրդին: Ահա այդպես նա վաստակեց Հայոց պատմութեան 19-րդ դարի Եղիշէ անունը:

Արեւմտահայութեան ծանր կացութիւնը փրկութեան ուղիները էր պահանջում: Արեւելահայ իրականութիւնը ծնում էր գործիչներ, որոնք «թուրքահայոց դատը» դարձնելով գործունէութեան ուղենիշ, ազատագրութեան դժուարին ճանապարհ էին գալիս՝ անձնագոհութեանը զուգորդելով ժամանակահատուածի պահանջների վերլուծութիւնը, յանգելով պայքարի նոր գաղափարախօսութեան: Այդ ընդհանուր տեսադաշտում 70-ական թուականներից ասպարէզ եկաւ Գ. Արծրունին, որը «Մշակը» վերածեց համահայկական ամբիոնի եւ փայփայանքներով բարձրացնում էր այն դրօշը, որի շուրջը պէտք է համախմբուէին ազգի փրկութեանը զինուորագրուած բոլոր ուժերը:

-Աշխարհը կը յարգէ հայերին միայն այն ժամանակ, երբ ամէնքը կը տեսնեն որ հայը իր կեանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիւը, իր ազգի իրաւունքները,- գրում էր Գ. Արծրունին եւ վերլուծելով այն կացութիւնը, որի մէջ յայտնուել է արեւմտահայութիւնը, փրկութեան ուղիներ առաջադրում, որտեղ, սկզբնական շրջանում, առաւելութիւնը տրւում էր ռուսական ազդեցութեանը, նրա օգնութեանը: Ռուսաստանին վերադրելով հայութեանը «հինգ վեց դար» տեւած քնից արթնացնելու գործընթացը, այնուամենայնիւ, զգալով այդ ազդեցութեան հետեւանքները, Արծրունին «օղային մի ամբոցի» էր նմանեցնում ռուսական օգնութիւնը, որից հայերը ոչինչ չեն ստացել, միմիայն ոգեւորութիւն: Դանդաղ, բայց հաստատուն ձեւաւորւում էր Գ. Արծրունու այն գաղափարը, որ անհրաժեշտ է հայի մէջ արթնացնել սեփական ուժերի նկատմամբ վստահութիւնը, նախապատրաստուել ահեղ մարտերի՝ «Այժմ կամ երբեք», ապա՝ «...տունը քանդուել է, ընկնելու, աւերակ դառնալու, փուլ գալու վրայ է, շուտով դուրս եկե՛ք այնտեղից, երկաթը ձեռքիմ քանդեցե՛ք նրա ծոած, սպառնող պատերը, եթէ ոչ, ամէնքդ էլ նրա աւերակների տակը կը մնաք»²⁰:

Փոխաբերական իմաստով գրուած յօդուածում Գ. Արծրունին բարձրացնում էր ապստամբութեան գաղափարը եւ օրինակ բերելով բալկանեան սլաւոններին, յուսալով, որ սկսուելիք պա-

²⁰ Մշակ, 1876, թիւ 27:

տերազմում ռուսական յաղթանակը՝ ազատութիւն կը բերի նաեւ հայութեանը:

Պատերազմն ավարտուեց, Բեռլինի վեհաժողովը զգալի փոփոխութիւններ առաջ բերեց հայ հասարակական հոսանքների դիրքորոշումներում, բարձրացաւ ազգային ինքնագիտակցութիւնը, հայ քաղաքական միտքը վերջապէս յանգում էր այն տեսութեանը, որ դիւանագիտական շրջապտոյտները Հայրենիքի փրկութեան ուղին չէ: Յուսախաբութիւնն ակնյայտ էր: Հայ քաղաքական միտքը յանկարծակի եկաւ: Ռուսաստանին փարոսողների նման, Գ. Արծրունին եւս ընկաւ տարակարծութեան մէջ եւ 61-րդ յօդուածը, ինչպէս վկայում է Յ. Նշկեանն իր յուշերում՝ «կը մմանեցնէր խաղալիքի կամ անուշեղէնի մը, որ կու տան երեխայի մը լացը կտրելու ու հանգստացնելու համար դիւանագիտական աշխարհի մէջ մեմֆ երեխայ եմֆ տակաւին, որոպէստեւ հասուն հասակի կորովն ու գործը չեմֆ ցոյց տուած, մախ պէտք է հասունանամք, մեծանամք ու մարդ դառնամք, այն ատեն Եւրոպան մեզ չի կարող խաբել այդ խաղալիքներով», առաջ քաշելով «երկաթէ կամֆ ունեցող» առաջնորդների, նոր սերունդ դաստիարակելու հարցերը, Գ. Արծրունին գտնում էր, որ Հայկական հարցի լուծումը մէկ օրուայ խնդիր չէ, այլ տասնամեակների՝ «յիսուն տարին մի անցնան ժամանակամիջոց է, այդ տունկը շատ ուշ է անում (խօսքը ազատագրական նոր սերնդի մասին է - Հ.Զ.), շատ աշխատութիւն ու խնամք է պահանջում, շատ ուշ էլ պտուղ է տալիս, մեմֆ տնկում եմֆ, ուրիշները անեցնում եմ, ուրիշներն էլ պտուղ բերելն են տեսնում եւ ուրիշներ պտուղները վայելում: մեր գլխաւոր գործը պէտք է լինի այն, որ կարող լինեմք մի սերունդ առաջ բերել, որ ընդունակ լինի այդ սերմը անեցնել, ոչ թէ փչացնել»²¹:

1867թ. կրելով վարդապետի վեղարը, երկու անգամ շրջագայելով Արեւմտեան Հայաստանում՝ Գ. Սրուանձտեանցն իր աչքով տեսաւ ստրկացուած հայրենակիցներին եւ ուղիներ էր փնտրում նրանց այդ վիճակից դուրս բերելու, ազգային ու մարդկային գիտակցութիւնն արթնացնելու: Այդ մտահոգութիւնների հանրագումարները դարձան «Մշեցունց վրայ ընդհանուր տեսութիւն մը» ընդարձակ յօդուածաշարը, «Թորոս Աղբար»,

²¹ ՆՇԿԵԱՆ Յ., Առաջին կայծերը, «Պաթարի» տպարան, 1930, էջ 57.

«Գրոց ու բրոց», «Հնոց եւ նորոց», «Համով - հոտով» ստեղծագործութիւնները, «Սասունցի Դաւիթ» էպոսի առաջին տարբերակը, գաւառահայութեան վիճակին նուիրուած բազմաթիւ յօդուածներ: Մօտիկից դիտարկելով գաւառահայութեան վիճակը Գ. Սրուանձտեանցը եկաւ այն եզրակացութեան, որ թուրքական զազրելի իրականութիւնը հայ ժողովրդին զրկել է ազգային գիտակցութիւնից, ինքնապաշտպանական բնազդից, վերածելով համբերատար հարստահարուողի:

Վերապրելով 1862թ. Զէյթունի հերոսական ապստամբութեան պարզեւած ոգեւորութիւնը, հայրենասէր գործիչն իր ժողովրդին կոչում էր պայքարի՝ «...գարկ ու գարկուիք, ինկար՝ վեր կանգնիր, անշուշտ կը յաղթես, մեռնիս էլ կը յաղթես, վերջապէս կը յաղթես»²²:

Հայկական հարցի լուծման ուղղութեամբ գաղափարները ոչ միայն միատարր չէին, այլեւ կային գործիչներ, որոնք նախապատուութիւնը տալիս էին Արեւմուտքին, այս կամ այն եւրոպական պետութեանը: Անգլիային փարուելու կողմնակիցների մէջ փայլում էր «Նոր Դարի» տնօրէն Ս. Սպանդարեանը: Համոզելով, թէ «Անգլիայից հայ ազգութեանը երբեք վտանգ չի կարող սպառնալ», խմբագրապետը մեղադրանքներ էր բարդում այն գործիչների վրայ, որոնք թերահաւատութիւն ունէին 61-րդ յօդուածի նկատմամբ. «միթէ՞ վատ է, որ հայերը կոյեկտիւ հովանաւորութիւն են վայելում», զարմացած գրում էր Ս. Սպանդարեանը²³:

Հայ ժողովրդին կոչելով խոհեմութեան ու համբերութեան՝ Ս. Սպանդարեանը խորհուրդ էր տալիս թուրքական տիրապետութիւնը չփոխարինել ուռսականով՝ «Եզան լուծը հանելով՝ ձիու խամուքը չհագնեն», ապա՝ «ազգի կենսական շահերը պահանջում են, որ թուրքահայերը հաւատարիմ լինեն օսմանեան պետութեան», որովհետեւ կայսրութեան սպասուելիք բարգաւաճումը լաւագոյն պայմաններ կը ստեղծի արեւմտահայութեան համար, իսկ եթէ կործանուի կայսրութիւնը, այն աղէտաբեր կը լինի թուրքահայերի համար եւ նրանք կ'անհետանան «աշխարհիս երեսից»²⁴:

²² «Արծիւ Վասպուրականի», 1862/63, թիւ 1, էջ 9.

²³ «Նոր Դար», 1881, թիւ 182, 1884, թիւ 39.

²⁴ Նոյն տեղում, թիւ 131, 1888, թիւ 17.

Հայկական հարցի լուծումը իւրայատուկ մեկնաբանութիւնների էր արժանանում միդհատեան խմբակցութեան անդամ Գ. Օտեանի կողմից: Սուլթանական բիրտ քաղաքականութեանը հակադրելով Ազգային սահմանադրութիւնը, Գ. Օտեանը յոյսով էր, որ այն լուրջ տեղաշարժեր կ'առաջացնի արեւմտահայութեան կեանքում, յատկապէս տնտեսական բնագաւառում: Ազատագրութեան կարեւոր լծակ համարելով ազգի տնտեսական ու բարոյական բարգաւաճումը, օսմանեան սահմանադրութեան համահեղինակը ապսպրում էր սպասել մինչեւ այն պահը, երբ հայութիւնը հնարաւորութիւն կ'ունենայ շարժելու իր մարմնի բոլոր մասերը: Քաջատեղեակ լինելով իրականացուող քաղաքականութեանը, Գ. Օտեանը տարածելով այդ միտքը, փաստօրէն փորձում էր պահպանել առկայ վիճակը եւ մանրակրկիտ վերլուծութիւններից ու նախապատրաստութիւնից յետոյ միայն, երբ արեւմտահայութիւնը սերտած կը լինի նաեւ դիւանագիտական դարձուածքների լեզուն, ծնել ու դաստիարակել նուիրուած առաջնորդներ ու նոր միայն սկսել ազատագրական պայքարը. «ստրկացած եւ գրեթէ անհոգի ժողովուրդ մը կենդանացնելը գերբնական կարողութեամբ օժտուած անձերու կը կարօտի, բայց պէտք է խորհի՛ք թէ ազգի մը փրկութեան գործը դիւրաւ եւ այսօրուան վաղուան մէջ կատարուելիք գործ չէ»²⁵:

Գ. Օտեանի գաղափարաբանութիւնը յանգում էր երկարատեւ նախապատրաստութեան, կուռ կազմակերպուածութեան ստեղծման, եւրոպական տէրութիւնների համակրանքն ու պաշտպանութիւնը ապահովելու գաղափարին:

Արեւմտահայութեան ինքնաճանաչման, ինքնագիտակցութեան բարձրացումը ազատագրական շարժման ընդհանուր գործի բաղկացուցիչ մասն էր, նրա հիմքը:

Այդ գործընթացը ցանկալի աւարտին հասցնելու համար անհրաժեշտ էր ի մի բերել ազգի ողջ ընդունակութիւնը, նրա ցրուած ու անվստահ ուժը, վերջ տալ խառնաշփոթ այն վիճակին, երբ ժողովրդի լայն զանգուածները հեռու էին մնում ազգային ընդհանրութեան հասնելու գաղափարից: Երկարատեւ եւ տքնալան աշխատանք պահանջող մի գործընթաց, որը ժամանակի պահանջն էր:

²⁵ ՆՇԿԵԱՆ Յ., նշուած գիրքը, էջ 90-91:

ինչպես նկատում է Ա. Զօպանեանը, Թուրքիայում աճող եւրոպական ազդեցութիւնը «հայ զանգուածին վրայ ալ առաջ քերած էր ցնցում մը»: Բայց այդ ցնցումը խորն ու բազմակողմանի չէր, որովհետեւ այն կրող ժողովուրդն անպատրաստ էր նման իրողութեանը:

- Պէտք էր, որ «նշմարտապէս եւրոպացած» խումբ մը հայեր գային եւ գիտակից գործունէութեամբ մը լուային հայ հոգին իր բազմամեայ թանձրակուտակ աղէտին, արթնացնէին եւ զայն կարող դարձնէին արեւմտեան ֆաղափարութեանը լրջօրէն իւրացնելու, վերականգնելին հայկական քարոյականը՝ ֆանի մը առողջ ազնիւ ու ամուր սկզբունքներուն ներարկումով²⁶:

Գրականագէտը, ինչպէս տեսնում ենք, հայ կեանքի արթնացման համար պահանջ էր դնում բարոյական վերականգնման, այսինքն՝ հոգեկան պատրաստակամութեան բարձրացման, որի վրայ յենուելու էր ազատագրական միտքը, նրան անդամագրուելու, նրա իրականացման համար պայքարելու «գրգիռը»:

Հայ տկարամիտ գործիչների անարիւն գործունէութեան դէմ իր մեղադրողի ձայնն էր բարձրացնում արեւմտահայութեան ոգու եւ ապագայի հարցերով տառապող Ծերենցը՝ գրելով, թէ 40 տարի շարունակ հայ «ժողովուրդը լսում է «ազատական խոստումներ» թանգիմաթների, սահմանադրութեան, 16 եւ 61-րդ յօդուածների կերպարանքով, բայց իրականում ոչինչ չի փոխւում:

Ահա այստեղ էր, որ ձեւանալով կոյր «շատ եւ շատ եռանդուն եւ սայրասուր գրիչներ կը զինուին համոզելու հայ տկարամտութեանը՝ յուսալու եւ հաւատալու, թէ ամէն բան վաստակուած է եւ ապահովուած Բեռլինի դաշնագրէ, եւ միայն հայուն կը մնայ հասուն պտուղը ֆաղելու համար ձեռքը երկարացնել»²⁷:

Անարգանքի նշաւակ դարձնելով ազգի անհեռատես եւ սուտ խոստումներով ոգեւորուած գործիչներին, նրանց, ովքեր այդքան դառն ու արիւնալի փորձերից յետոյ էլ պաշտպանու-

²⁶ ԶՕՊԱՆԵԱՆ Ա., Պէշիկթաշլեան Մ., Փարիզ, 1807, էջ 9:

²⁷ ԾԵՐԵՆՑ, Ժամանակի ոգին եւ հայ ապագան, տես՝ «Փորձ», 1879, թիւ 1, էջ 206:

թիւն եւ օգնութիւն էին ակնկալում Եւրոպայից, յատկապէս Անգլիայից, Մերենցը յիշեցնում էր. «...տեսէ՛ք ով է նրա դեսպանն ի Պոլիս, Մ. Լեյարդ, մարդ, որ սրտովն ու հոգովն թուրք է, քան զամէն թուրք»²⁸:

Արդ, ինչ սպասելիքների մասին կարող է խօսք լինել, երբ Ռուսաստանն ու Անգլիան սրարշաւ իրար են հանդիպում Հայաստանում եւ հայութեանը տրորում, ձգտում արմատահան անել: Բայց Մերենցը չի կորցնում յոյսը, հայ ժողովրդին նմանեցնելով թզենու՝ յայտնում, որ նրանց քաղաքականութիւնը չի տայ սպասուած արդիւնքը:

Ուրիշ խօսքով, Մերենցը այն յոյսն էր փայփայում, որ եւրոպական դիւանագիտութեանը չի յաջողուի ասպարէզից հեռացնել մի ժողովրդի, որն ընդունակ է ազատութեան ծիւեր արձակել անգամ այն ճնշիչ վիճակում էլ, որը ստեղծուել է Ռուսաստանի ու Անգլիայի դաւաճանական քաղաքականութեան պատճառով:

Հակամարտութիւնների կիզակէտ տարածաշրջանում վարուող այդ քաղաքականութիւնը նկատի ունէր Գ. Զոհրապը, երբ գրում էր. «...կասկածելի չէ, որ Ֆրանսիա, Գերմանիա եւ Մեծ Բրիտանիա անկեղծօրէն կը փափաքին բարենորոգումներ թրքահայաստանի մէջ. բայց Գերմանիա եւ Անգլիա կը վախճան որ բարենորոգումները աւելի տարածեն Ռուսական ազդեցութիւնը այս շրջանին մէջ»²⁹:

Տալով Հայկական հարցի պատմական անցեալը, բնակչութեան տնտեսական, մշակութային կացութիւնը, պարզաբանելով, թէ ինչու թուրքական կառավարութիւնը չի ցանկանում իրականացնել բարենորոգումները, Գ. Զոհրապն այնուհետեւ փորձում է նշել Հայկական հարցի լուծման ուղիները, վերլուծութիւնները կատարելով նրա նկատմամբ Եւրոպայի վերաբերմունքի տեսանկիւնից:

Զհամաձայնուելով այն մտքի հետ, թէ Հայկական հարցը եւրոպական երկրների մարդասիրական քաղաքականութեան արտայայտութիւնն է, Գ. Զոհրապը գրում էր. «Հայկական Հարցը Եւրոպայի առջեւ չի դրուի որպէս մարդասիրական խնդիր

²⁸ Նոյն տեղում, էջ 207:

²⁹ ԶՈՂՐԱՊ Գ., Հայկական Հարցը, Մարսել, 1913, էջ 31:

վր», այլ այն գուտ փաղափական խնդիր է եւ ունի հայի կորցրած փաղափական անկախութիւնը վերականգնելու նպատակը³⁰:

Սարուխանի «Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910)» աշխատութիւնը հիմնականում անդրադառնում է արեւմտահայութեան սահմանադրական պայքարին, ապա մանրամասնում են տեղեկութիւններ կապուած Սան Ստեֆանոյի բանակցութիւնների, պայմանագրի, Բեռլինի վեհաժողովի մասին:

Սակայն, հեղինակն անկարող լինելով չըջանցել Հայկական հարցը, իր տեսակէտներն է ներկայացնում խնդրի առնչութեամբ: Թերեւս, դէմ դուրս գալով այն մտայնութեանը, որ արեւմտահայութեան ազատագրութիւնն արեւմտահայերի գործն է, Սարուխանը յայտնում է, թէ այդ գաղափարը չի համապատասխանում իրականութեանը, որովհետեւ «այս շարժման մէջ սկզբից ի վեր այնքան քաղմաթիւ ոչ-թրքահայատակ եւ մանաւանդ ոռոսահայատակ հայեր են մասնակցած, որ...»³¹: Ասել է, արեւմտահայութեան ազատագրութեան հարցը վեր էր ածուել համազգային խնդրի, որի լուծմանն իր բարոյական ու ֆիզիկական կարողութիւններն էր ներդնում հայութիւնը:

Մ. Խրիմեանի «արցունքի լեզուով» հայ դատը լուծելու պատուիրակութեան անդամ Մ. Զերազը «Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն» գրքում յոյս է յայտնում, որ ապագան արձան պէտք է կանգնեցնի Ն. Վարժապետեան պատրիարքի հայրենանուէր գործունէութեան համար, Բեռլինի վեհաժողովի որոշումը կորզելու կապակցութեամբ եւ աւելացնում, թէ «ազգս ոչ միայն վնաս չը կրեց, այլ մեծապէս շահեցաւ Պերլինի վեհաժողովէն»³²:

Շահ ասուածը, ըստ Մ. Զերազի, 61-րդ յօդուածն էր, որի իրագործմանը պէտք է հսկի նաեւ Անգլիան, որի «կարեւորութիւնն անսահման է»: Եւ, հայրենակիցներին համոզում, թէ կարելի է Թուրքիայից աւելի ընդարձակ բարենորոգումներ պահանջել: Երեւակայութեան արդիւնք այս նորամուծութիւնը արդիւնքն էր պատմական իրադարձութիւնների, անգլիոյ - ոռոսա-

³⁰ Նոյն տեղում, էջ 9:

³¹ ՍԱՐՈՒԽԱՆ, Հայկական խնդիրը եւ ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), Թիֆլիս 1912, էջ բ - գ:

³² ԶԵՐԱԶ Մ., Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն, Պոլիս, 1878, էջ 7, 8:

կան ապագայ հակամարտութիւնները: Գտնում է, որ դրանից հայութիւնը օգուտ է քաղելու, որ «Պերլինի Վեհաժողովէն մի ոսկեհամք շահեցանք. մեզ անկ է խիզախել եւ հանել ոսկին»³³:

Ժամանակակից գործիչներից շատերի նման Մ. Զերազը խանդավառուած էր, որ վերջապէս Հայկական հարցը քննարկուեց եւ արժանացաւ միջազգային ճանաչման:

Ապագայ իրադարձութիւնները ստիպեցին Մ. Զերազին ու նրա համախոհներին մտածել նոր գնահատականների մասին: «Հայաստան եւ Խալիս» գրքում հայրենասէր գործիչը ցաւով արձանագրում է, որ Եւրոպան չի ճանաչում հայութեանը, որ «Յոյս չը դնեմք օտարին վրայ»³⁴:

-Հայաստան կ'ուզէ ճար, Անգլիան կու տայ ճառ,- եզրափակում էր Մ. Զերազը եւ հայրենիքի ազատագրութեան յոյսը կապում հայ ժողովրդի հաւաքական ուժի հետ³⁵:

Առաջին աշխարհամարտը, Հայոց Մեծ ցեղասպանութիւնը, Հայկական հարցի գնահատման ու վերլուծման նոր պահանջներ առաջադրեցին: Իրենց խորը, գիտական մշակմանն էին սպասում 1914-1918թթ. իրադարձութիւնները, կամաւորական շարժումը, երիտթուրքական վարչակարգի մարդկութեան նկատմամբ իրականացրած ոճրագործութիւնը, ռուսական ցարիզմի, ժամանակաւոր կառավարութեան, բոլշեւիկեան իշխանութիւնների վարած հակահայկական քաղաքականութիւնը, Հայաստանի բռնի խորհրդայնացումը, համայնատիրական վարչակարգի տարիներին Հայկական հարցի նկատմամբ հալածական վերաբերմունքի պատճառները, սփիւռքահայութեան հերոսական, հայրենասնուէր գործունէութիւնը Հայ Դատն ու Պահանջատիրութիւնը միջազգային բարձր ատեաններ հանելու ջանքերը, դրանց արդիւնքների հանրահռչակումը:

Համայնատիրական վարչակարգի տարիներին ստեղծուած աշխատութիւնները թէեւ հլու էին տիրող գաղափարախօսութեանը, սակայն հազէս եկան համարձակ ուսումնասիրողներ, որոնք պատուելով մոռացութեան քօղը, արթնացրին ժողովրդի ազգային մտածողութիւնը, նախապատրաստուելով 60-ական թուական-

³³ Նոյն տեղում, էջ 19-21, 23, 29:

³⁴ ԶԵՐԱԶ Մ., Հայաստան եւ Խալիս, Պոլիս, 1879, էջ 12-13, 22:

³⁵ Նոյն տեղում, էջ 22:

ների ազգային զարթոնքը: Մ. Ներսիսեանի, Ջ. Կիրակոսեանի, Ա. Եսայեանի, սփիւռքահայ պատմաբանների, հասարակական, քաղաքական գործիչների, կազմակերպութիւնների ջանքերով ժողովրդին մատուցուեց ոչ հեռաւոր անցեալի ճշմարիտ պատմութիւնը, ինչը դրական լիցք հաղորդեց ազգային գաղափարախօսութեան վերածննդի գործին: 1915-2004թթ. գրուած աշխատութիւնները նախորդ շրջանում գրուած ուսումնասիրութիւնների նկատմամբ ունեն նաեւ որակական տարբերութիւններ, առաւել յագեցած են փաստաթղթերով, շրջանառութիւն են բերում Հայկական հարցի, Հայոց Մեծ եղեռնի հետ կապուած անժխտելի վկայութիւններ, որոնք միջազգային հանրութեանը աւելի են մօտեցնում ճշմարտութեանը:

Սփիւռքահայ ուսումնասիրող Ա. Փափազեանը Հայկական հարցի ժամանակագրութիւնը թէեւ սկսում է 19-րդ դարի 70-ական թուականներից, սակայն յայտնում է նաեւ, որ Հարցի արծարծումը գոյութիւն է ունեցել աւելի վաղ, հանդիսանալով Արեւելեան հարցի բաղկացուցիչ մասը³⁶:

Գրեթէ նոյն կարծիքին է Ս. Բիւրատը: Նա այդ առթիւ գտնում է, որ Արեւելեան հարցը ծագել է այն ժամանակ, երբ թուրքերը ներխուժեցին Եւրոպա (1355թ.): Ապա, իր տեսակէտն աւելի հիմնաւորելու համար, աւելացնում է. «Հայկական հարցի ծագումը պէտք է փնտռենք Ռուբենեան երեք դարեան Հարստութեան վերջին վեհապետին՝ Լեւոն Լուսինեանի՝ նախ Մատրիտի, յետոյ Լոնտոնի եւ ի վերջոյ Բարիգի արքունիքները դեգերումներուն մէջ»³⁷:

Սփիւռքահայ յայտնի պատմաբան Գ. Ահարոնեանը «Ինչ է սակայն «հայկական հարցը» կամ «հայ դատը», ե՞րբ ծնաւ ան, ի՞նչ փուլերէ անցաւ» իր իսկ հարցադրմանը պատասխանում է. «Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, պէտք է նշել, թէ «հայկական հարցը» ծնունդ առաւ այն օրը՝ երբ կորսնցուցինք մեր ազատութիւնը, մեր պետական անկախ կեանքը: Եւ այդ դժբախտութիւնը Հայաստանի հողամասին վրայ վերջին անգամ պատահեցաւ 1236 թուականին՝ երբ մոնգոլ հորդաները ջնջեցին Ջափարեան իշխանապետութիւնը եւ հաստատեցին

³⁶ ՓԱՓԱԶԵԱՆ Ա., Ժամանակագրութիւն Հայկական հարցի եւ Մեծ եղեռնի, Երեւան, 2000, էջ 3:

³⁷ ԲԻՒՐԱՏ Ս., Արեւելեան խնդիր եւ Հայկական Հարց, Պոլիս, 1919, էջ 6, 20:

իրենց կործանիչ տիրապետութիւնը: Մէկ ու կէս դար ետք, 1375 թուականին, նման դժբախտութիւն արձանագրուեցաւ Կիլիկիոյ մէջ, երբ մեմլուքները գրաւեցին Սիսը եւ ջնջեցին հայկական անկախ թագաւորութիւնը: Այդ շրջաններուն էր, ուրեմն, որ ծագեցաւ մեր հարցը»³⁸:

Ասել է, Գ. Ահարոնեանը Հայկական հարցի ծագումը տեղափոխում է 13-րդ դար՝ անուշադրութեան մատնելով իր իսկ սահմանումը, որ Հայկական հարցը ծագել է այն ժամանակ, երբ հայութիւնը կորցրեց «պետական անկախ կեանքը»: Ինչպէս յայտնի է, «Հայաստանի հողամասին վրայ» նմանատիպ դժբախտութիւններ տեղի են ունեցել յաճախակի եւ, եթէ պետականութեան կորուստն ենք ընդունում Հայկական հարցի ծագման սկիզբ, ապա այն պէտք է տեղափոխենք առնուազն 5-րդ դար (428թ.), երբ կործանուեց Արշակունիների հարստութիւնը: Այստեղից էլ, վերոյիշեալ եւ նման բովանդակութեան մի շարք այլ դիտարկումները հեռու են մնում պատմական ճշմարտութիւնից, որովհետեւ, եթէ Հայկական հարցը հայ ժողովրդի պայքարն է անկախութեան եւ պետականութեան վերահաստատման համար, ապա այդ գործընթացն սկզբնաւորուել է հայ ժողովրդի կազմաւորման հետ միաժամանակ եւ ուղեկցել նրան իր բազմադարեայ պատմութեան ընթացքում: Պատմաբանների մի մեծ խումբ էլ Հայկական հարցի ծագումը կապում է 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրի հետ: Վ. Պարսամեանը «Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչեւ Բեռլինի կոնգրէսը» յօդուածում³⁹ եւ առաւել հիմնաւոր՝ Հայ ժողովրդի պատմութեան Բուհական դասագրքում, գրում էր. «Հայկական հարցը, որպէս միջազգային դիւանագիտութեան հարց, ծագել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ եւ սերտօրէն կապուած էր Արեւելեան հարցի հետ: Հայկական հարցն առաջին անգամ իր արտայայտութիւնն է գտել 1878թ. փետրուարի 19-ին (մարտի 3-ին) Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ Սան-ստեֆանոյում կնքուած հաշտութեան պայմանագրում: Ուստի ճիշտ չեն այն հեղինակները, որոնք հայկական հարցի ծագումը կապում

³⁸ Ա.ՀԱՐՈՆԵԱՆ Գ., Մեծ երազին ճամբուն վրայ, *Հոս Անճէլես*, 1986, էջ 8:

³⁹ Պատմագիտական աշխատութիւններ, Երեւան, 1985:

եմ հայ ժողովրդի ծագման կամ միջին դարերի ազատագրական պայքարի հետ»⁴⁰:

Բազմավաստակ պատմաբանը, սակայն, իրաւացի չէ, երբ պնդում է, թէ Հայկական հարցը միջազգային ճանաչման է հասել 1878թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով, որովհետեւ մինչ այդ, 1813 թ. Գիւլիստանում կնքուած ռուս-պարսկական պայմանագրով արդէն Հայկական հարցը ճանաչուել էր որպէս միջազգային հարց, չէ՞ որ Պարսկաստանը եւս միջազգային սուբյեկտ էր, եւ կնքուած պայմանագիրը շօշափում էր նաեւ հայկական տարածքների խնդիրը:

Հայկական հարցի բնորոշմանը, ծագմանն ու ընթացքի մասին առանձնայատուկ վերլուծութիւն է կատարում ակադեմիկոս Մ. Ներսիսեանը: Բեռլինի կոնգրէսին վերապահելով Հայկական հարցի միջազգայնացման իրաւունքը, Մ. Ներսիսեանը Հայկական հարցի ծագումը կապում է Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովի հետ, գրելով. «...այդ դիւանագիտական յարաբերութիւնների եւ բանակցութիւնների ընթացքում էլ Արեւմտեան Հայաստանի ու նրա հայ բնակչութեան վիճակի քարելուման խընդիրը անուանուեց եւ այնուհետեւ շարունակուեց կոչուել ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ՝ Հայաստանի նոր պատմութեան կարեւոր եւ ժողովրդի լայն խաւերին յուզող խնդիրներից մէկը»⁴¹:

Բերուած յղումից պէտք է կարծել, որ Սան Ստեֆանոյի, մինչ այդ կայացած Գիւլիստանի, Թուրքմէնչայի, Ադրիանապոլի, Փարիզի պայմանագրերը, որոնք նոյնպէս շօշափում էին «Արեւմտեան Հայաստանի ու նրա հայ բնակչութեան վիճակի քարելուման խնդիրը», պաշտօնական դիւանագիտական բանակցութիւններ չէին, առաւել եւս Փարիզի բանակցութիւնները, որոնց նոյնպէս, բացի Ռուսաստանից եւ Թուրքիայից, մասնակցում էին Անգլիան, Ֆրանսիան, Սարդինական թագաւորութիւնը:

Յիշեալ բոլոր պայմանագրերը պաշտօնական էին, եւ կարելի է դրանց հետ կապել Հայկական հարցի ծագումը: Աւելին, Մ. Ներսիսեանը թերի սահմանում է տալիս նաեւ Հայկական հարցին՝ այն դիտելով լոկ «Արեւմտեան Հայաստանի ու նրա հայ բնակչութեան վիճակի քարելուման խնդիր»: Այդ դէպքում, մեծ

⁴⁰ Հայ ժողովրդի պատմութիւն, Կ. 3, Երեւան, 1967, էջ 295.

⁴¹ Հայ ժողովրդի պատմութիւն, Երեւան, 1972, էջ 369.

յաջողութեամբ խնդիրը կարելի է անուանել ԱՐԵԻՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ հարց՝ Հայկական հարցը զրկելով համահայկական, համազգային բովանդակութիւնից:

Հայկական հարցի ծագման առթիւ իր տեսակէտներում Զ. Կիրակոսեանը նոյալէս համակարծիք է, որ Հայկական հարցը ծագել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ. «Ասպարէզ է իջել (Հայկական հարցը-Յ.Զ.) եւ Արեւելեան հարցի բաղկացուցիչ մաս է դարձել 19-րդ դարի 70-ական թթ. 1877-1878-ի ռուս-թուրքական պատերազմից յետոյ»⁴²: Կամ՝ «Այս պահից սկսած (յիշեալ պատերազմին յաջորդած դիւանագիտական պայքարից յետոյ-Յ.Զ.), հայկական հարցը վերածուեց միջազգային փառաքան հարցի եւ դիւանագիտութեան պատմութեան մէջ մըտաւ որպէս Արեւելեան հարցի մի բաղկացուցիչ մաս»⁴³:

Թէեւ երկու մէջբերումներում հիմնաւորում է Հայկական հարցի ծնունդը, ասպարէզ գալը, սակայն, յատկապէս վերջին քաղուածքում, պարզորոշ նկատելի է, որ խօսքը գնում է լոկ հարցի միջազգայնացման մասին: Աւելին, հանրագիտարանային տարբերակում Զ. Կիրակոսեանն առաւել ընդգծելի է ներկայացնում մեզ հետաքրքրող խնդրի բովանդակութիւնը եւ փաստօրէն սահմանում Հայկական հարցի բովանդակութիւնը. «Հայկական հարց, թուրքական լծից արեւմտահայութեան ազատագրման, հայ ժողովրդի ինֆնորմացիոն ու սեփական պետականութիւն ստեղծելու համար մղուած պայքարի անուանումը դիւանագիտութեան պատմութեան մէջ»⁴⁴:

Ասուածից պէտք է բխեցնել, որ այդ մեծ ու դարերի տարիք ունեցող խնդիրը չէր կարող ծնունդ առնել ու միջազգայնացուէր պատմական մի որոշակի, ընդգծուած ժամանակահատուածում, այլ արդիւնք էր հայ ժողովրդի գոյապայքարի ու սեփական պետութիւնը վերականգնելու համար մղուած մարտերի:

Պրոֆէսոր Ա. Եսայեանը «Հայկական Հարցը եւ միջազգային դիւանագիտութիւնը» աշխատութեան մէջ առաւել հանգամանալից է անդրադառնում Հարցի քննութեանը՝ խոստանալով հնարաւորութիւն ստեղծել «պատկերացում կազմելու «հայկա-

⁴² Հայկական Սովետական հանրագիտարան, Հ. 6, Երեւան, 1980, էջ 185:

⁴³ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Զ., Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայութիւնը, Երեւան, 1967, էջ 126:

⁴⁴ ՀՍՀ, հ. 6, Երեւան, 1980, էջ 185:

կան հարցի» բովանդակութեան մասին պատմական տարբեր էտապներում»: Սակայն, «պատմական տարբեր էտապները» *Թողնելով անորոշութեան մէջ, չբացայայտելով Հայկական Հարցի էությունը, նրա անցած փուլերը, սկզբնաւորումը, ձեւաւորումը, Ա. Եսայեանը աւելացնում է. «Այսուհետեւ (Բեռլինի կոնգրէսից յետոյ - Յ.Զ.) «հայկական հարցը» դադարեց սոսկ Օսմանեան կայսրութեան ներքին հարց լինելուց, փոխադրուեց միջազգային ֆաղափականութեան ոլորտը, դարձաւ միջազգային իրաւունքի նորմերով կարգաւորուող հարց, Հայաստանն ու հայերը դարձան միջազգային ֆաղափականութեան ու միջազգային իրաւունքի օբյեկտ»⁴⁵:*

Սփիւռքահայ հասարակական, քաղաքական, մշակութային ու կուսակցական գործիչ Հ. Տասնապետեանն ընդունելով, որ մինչեւ միջազգային ճանաչում ստանալը գոյութիւն է ունեցել Հայկական Հարցը, աւելացնում է. «Թէեւ, «Հայկական հարց» արտայայտութիւնը ԺԹ. դարու երկրորդ կեսին միայն նուիրականացած է Սան Ստեֆանոյի դաշնագրով անոր ստացած դիւանագիտական ֆանաչումի բերումով, բայց իրականութեան մէջ, գէթ հայութեան համար, խնդիրը առկայ էր այն օրէն ի վեր, որ Հայաստանը կը հիւծէր թուրանեան ժողովուրդներու լուծին տակ: Մեծ Հայաստանը ԺԱ. դարերու կեսերուն Բագրատունիներու անկումէն ասդին, եւ Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը 1375-էն սկսեալ, կրած էին ինչպէս կ'ըսէ Ժան-փիեռ Ալեմ, «թուրանական ցեղի բոլոր տեսակներուն դժընդակ փորձառութիւնը, սելմուքներ, մոնկոլ հորդանքեր, օսմանեան թուրքեր»⁴⁶:

Ինչպէս երեւում է յղումից, խօսքը տանելով Հարցի միջազգայնացման մասին, Հ. Տասնապետեանն ընդունելով մինչ այդ նրա գոյութիւնը, Հայկական Հարցի ծագումը կապում է 10-11-րդ դարերի հետ, նաեւ Կիլիկիայի Հայկական Թագաւորութեան (14-րդ դար), աւարտուն տեսքի չբերելով իր եզրակացութիւնը, որից էլ պէտք է կռահել, որ Հարցի ծագման ժամանակը կարելի է ընդունել եւ 11-րդ եւ 14-րդ դարը: Շարունակելով իր վերլու-

⁴⁵ ԵՍԱՅԵԱՆ Ա., «Հայկական հարցը» եւ միջազգային դիւանագիտութիւնը, Երեւան, 1965, էջ 8:

⁴⁶ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ Հ., Հայկական Հարցը, Բէյրութ, 1975, էջ:

ծուլթիւնները, Հ. Տասնապետեանը Հայկական հարցի միջազգայնացումը կապում է Իսրայէլ Օրու գործունէութեան հետ⁴⁷:

«Թախծալի յուշեր» արթնացնող, «հայկական կեանքի վըտալի» տարեգրութիւն հանդիսացող Հայկական հարցն իր խորազնին ուսումնասիրութեանն է արժանցրել նշանաւոր պատմաբան եւ բանասէր Ն. Ադոնցը: Նրա «Հայկական հարցի լուծման շուրջ» աշխատութիւնը բաղկացած է երեք՝ «Հայկական հարցը Սեւրում», «Հայկական Հարցի պատմական հիմքը եւ Թուրքիայի անկումը», «Թուրքիայի անդամհատումը» արժէքաչափ բաժիններէից:

«Աշխարհագրական, պատմական ու տնտեսական, ինչպէս նաեւ մի ընդհանուր էթնիկական ամբողջութիւն» ներկայացնող Հայաստանը հայութեան Հայրենիքն է, պատմական այն երկիրը, որտեղ ձեւաւորուել է հայ ժողովուրդը: Այդ երկրում էլ գտնուում է «Վիճելի հարց» անուանուող Հայկական հարցը, որի լուծման բանալին պէտք է գտնել նրա բուն պատմութեան մէջ»⁴⁸:

«Պարզ արդարութիւն» անուանելով Հայաստանի անկախութիւնը, հայերի «իրենց եւ իրենց երկրի տէրը» դառնալու իրաւունքը, Ն. Ադոնցը չի կորցնում հաւատը հարազատ ժողովրդի նկատմամբ եւ համոզուած էր, որ, երբ գայ ժամը, Հայաստանը «արիւնամերկ իր գաւակների արիւնով» կը նուաճի «սեփական մակատագրի տէրը լինելու իր իրաւունքը»⁴⁹:

Հայկական հարցի մասին նկատառումներ ունի Գ. Ղարաջեանը (Արկումեդ): Նկարագրելով 19-րդ դարի 80-ական թուականներին տիրող հասարակական լայն խաւերի վերաբերմունքը, Գ. Ղարաջեանը գրում էր. «80-ական թուականներին ստեղծուել էր երիտասարդ սերնդի շրջաններում մի տեսակ՝ եթէ կարելի է ասել՝ թունդ ազգասիրական մթնոլորտ: Ոչ թէ ոգեւորութիւնն էր միայն տիրել, ոչ թէ շատերի մտաւիճակն անուարկայ էր դարձել հայկական խնդիրը եւ տաճիկահայերի արեւով էին երդուում ամենքը, այլ այդ ժամանակից արդէն ջոկ-ջոկ անհատներ սկսում են սահմանից անցնել-«Երկիր» գնալ,

⁴⁷ Նոյն տեղում, էջ 6:

⁴⁸ Ա.ԴՈՒՅ Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երեւան, 1989, էջ 13:

⁴⁹ Նոյն տեղում, էջ 76:

այն աւետեաց երկիրը, որի հետ կապուած էին այնքան յոյսեր ու երազներ»⁵⁰:

Բաժանման խորը անջրպետ ստեղծելով հայութեան երկու հատուածների միջեւ, չկռահելով Հայկական հարցի բուն էութիւնը, նրան զրկելով համահայկական բնոյթից, ազգային գերխնդիր չճանաչելով այն՝ Գ. Ղարաջեանը կեղծ հոգացաւութիւն հանդէս բերելով՝ զգուշացնում էր վատ հետեւանքներից, նպատակ ունենալով ռուսահայ աշխատաւորական մասսաներին ու մտաւորականութեանը դարձնել ռուսական իրադարձութիւնների կցորդը, նրան զրկելով ազգային մտածողութիւնից, յանուն այն գաղափարի յաղթանակի, որը, ինչպէս յետագայում ցոյց տուեց իր դէմքը, աւելի քան կողոպտիչ դարձաւ Հայկական հարցում:

Մ. Սերոբեանը «Հայկական Հարցը եւ անոր փուլերը» գրքի խոստովանալից առաջաբանում յայտնում է, որ իր նպատակն է «գծել Հայկական հարցին ուղղութիւնը եւ մեր սայթաքումները, մատնանշել մեր ազգային դիտակետը, եւ անոր կրած յաջորդական փոփոխութիւնները»⁵¹:

Ապա, անցնելով Հայկական հարցի ծագման ժամանակաշրջանի բացայայտմանը, աւելացնում է, որ «Կարելի չէ Հայկական Հարցի մասին խօսել առանց ծանօթանալու քուրքերուն հետ»⁵²: Ասել է, Հարցի ծագումը կապում է թուրքական տիրապետութեան հաստատման հետ եւ սահմանում Արեւելեան հարցի ծագումը՝ այն վերագրելով Կ. Պոլսի 1453թ. գրաւման հետ, իսկ «Հայկական Հարցը Արեւելեան Հարցին մէկ մասը կը կազմէ եւ անոր վերջին փուլը գրեթէ»⁵³:

Հեղինակը յստակ հաստատում է, որ Հայկական հարցը ծնունդն է Արեւելեան հարցի (15-րդ դար), այնուհետեւ, Մ. Սերոբեանը յայտնում է նոր ձեւակերպում եւ Հայկական հարցի ծնունդը կապում թուրքերի, թաթարների, սելջուկների հալածանքների հետ՝ ապա «անոր պատմական ծագումը հետո չէ մեր ապրած օրերէն»⁵⁴ եւ այլն, որոնք խառնաշփոթ լինելուց բացի որեւէ վճռորոշ կարծիք չէին դառնում:

⁵⁰ ՂԱՐԱՋԵԱՆ Գ., Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918, էջ 11.

⁵¹ ՍԵՐՈԲԵԱՆ Մ., Հայկական հարցը եւ անոր փուլերը, Բէյրութ, 1937, էջ 6.

⁵² Նոյն տեղում, էջ 11:

⁵³ Նոյն տեղում, էջ 21:

⁵⁴ Նոյն տեղում:

Վ. Տէրեանը՝ Նայիրեան երկրի տառապանքների արտայայտիչը, որ ճակատագրի բերումով կանգնած էր բոլշևիկների նիւթած դաւի մատոյցներում, անկարող էր համակերպուել Հայրենիքի ճակատագրի նկատմամբ ոտնձգութիւնների հետ եւ «Հոգեւոր Հայաստան» յողուածում փորձում է դրութիւնից դուրս գալու ուղիներ որոնել:

Հայկական հարցը «մեր ազգի մերձակայ պատմութեան» վկայութեամբ դարձել էր ամբողջ հայութեան մտահոգութեան կենտրոնը: Այն իր դժբախտ անցեալով հայութեանը պարզեւել է գոհաբերութիւններ, «ծանր հիասթափութիւնների ու լիութի աղբիւր է եղել մեր ոչ միայն մտաւորականութեան, այլ նաեւ ժողովրդի ամենալայն խաւերի համար»⁵⁵:

Հայրենիքի ճակատագրի քննութիւնը, Հայկական հարցի լուծման մտահոգութիւնը Վ. Տէրեանին բերում է այն հետեւութեանը, որ հայութեան գերխնդիրը կը լուծուի միայն այն ժամանակ, երբ իրականանայ «հոգեւոր Հայաստանի» գաղափարը: Իսկ ի՞նչ էր հոգեւոր Հայաստան հասկացութիւնը: Վ. Տէրեանն այն անուանում է հիմնաքարը Հայրենիքի ազատագրութեան, գաղափար, որը հանդիսանում է հայութեան համախմբում, կազմակերպում, դժուարին մի գործընթաց, որը պահանջում է տեւական, անդադար, նուիրուած աշխատանք, «աւաւոր գոհաբերում», որն աւելի քան է, քան «արիւնի գոհաբերումը»⁵⁶:

Մեծանուն պատմաբան Լէոն, հայոց տառապանքների մատենագիրն ու վկան, վերլուծողն ու մեկնաբանը, տէրութիւնների քաղաքականութիւնը համարելով Հայկական հարցը կործանում տանող վճռորոշ լծակ, հիասթափուած հովանաւոր ու հաւատակից յորջորջողներին՝ հակասական տեսակէտներ է ասպարէզ բերում թէ՛ Հայկական հարցի ծագման, թէ՛ բովանդակութեան առումներով:

Այսպէս, եթէ «Հայոց հարցի վաւերագրերը» աշխատութեան մէջ գրում էր, թէ «Հայոց հարցը նոյնքան հին է, որքան հայ ազգը»⁵⁷: Հայկական հարցն անուանելով «ազգային գոյութեան հարց», «ազատագրական տենչանք», «հայ ազգի պատմութիւն», ապա գնահատելով 1862թ. Զէյթունի ապստամբութիւնը, Հայկական հարցի ծագումը կապում է 19-րդ դարի 60-ական թուականների ազատագրական շարժումների բարձրակէտ Զէյթունի

⁵⁵ Տէրեան Վ., Եթ, Երեւան, 1925, հ.4, էջ 213-214:

⁵⁶ Նոյն տեղում, էջ 224, 225, 228:

⁵⁷ Լէոն, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 1:

ապստամբութեան հետ: Աւելին, անտեսելով նախորդ որակումները՝ «Անցեալից» աշխատութիւնում Հայկական հարցի ծագումը համարում 70-ական թուականների իրադարձութիւնների արդիւնք. «Հայկական Հարցը ծնունդ է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ»⁵⁸:

Տէրութիւնների դաւաճանական քաղաքականութեան զոհն է Հայկական հարցը, «Լոնդոնը Լոնդոն էր մնում՝ համաշխարհային գիշատիչ բանկ, իսկ Մուշի դաշտը լկամներէի, լացի ու աղետի դասական հայրենիք»⁵⁹:

Լէոյի դառնութիւնը դրանով չէր սահմանափակուում: Նա ոչ թէ որոնում էր մեղաւորներին, ոչ թէ ամբողջ պատասխանատուութիւնը գցում էր տէրութիւնների վրայ, այլ՝ «...մենք ենք մեղաւորը, մենք մտաւորականներս, գործիչներս, դու, ես եւ բոլոր նրանք: Մեր ժողովուրդը մեղաւոր չէ: Այլ մենք, որ այսպէս յիմար եղանք, տգէտ, որ հաւատացինք շահամոլ, դրամատիկական-քուրժուական եւրոպային, որի համար գաղութների ոչխարների կեանքը աւելի արժէք ունին, քան հայերը, քան փոքր նուաճուած ազգերը: Մենք, որ երեսայի պէս հաւատացինք լուսաւոր մարդկութեանը, վաճառուող միջազգային մամուլին-քորենի, շնական դիպլոմատներին...»⁶⁰:

Հայրենիքի գաղափարը, Հայկական հարցը մշտապէս եղել են մեծ բանաստեղծ Ա. Իսահակեանի ուղեկիցները: Հայրենիքում, թէ վտարանդի, բանաստեղծը երբեք չի դադարել հարազատ ժողովրդի ճակատագրի մասին հոգալուց: «Հայրենիքի սուրբ գործը»՝ Հայկական հարցը, դարձել էր բանաստեղծի անսահման նուիրուածութեան կիզակէտը: Երազներն ու յոյսերը յաջորդում էին իրար, սակայն ոչ մի տեղաշարժ չէր նկատուում: Մեղաւորը, ի հարկէ, հայ ժողովուրդը չէր, մեղաւորը նրանք էին, որոնք «Հայկական ծով արիւնը» դարձրին «շաղախը»՝ միացնելու եւրոպացիներին, սերտ կապերով, թիրփի հետ...»⁶¹:

Եւրոպական, ռուսական ու թուրքական խարդաւանքների մէջ յայտնուած մի բոլոր ժողովուրդ օրհասական պայքար մղելու

⁵⁸ ԼէՕ, Անցեալից, Երեւան, 1925, էջ 17:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 40:

⁶⁰ ԻՍԱՀԱԿԵԱՆ Ա.Ի., Երկեր, հ. 4, Երեւան, 1959, էջ 50:

⁶¹ ԱՐԱՋԵԱՆ Գ., Ա. Իսահակեան եւ հայոց ողբերգութիւնը, Երեւան, 2001, էջ 293:

ճանապարհին, փրկութեան տարբեր առաջաստներ էր փնտրում: Այդ փնտրտուքը շարունակուում էր. «Մեր պապերն են լաւ-վատ մեզ պահել հասցրել մինչեւ 20-րդ դարը 19-րդ դարի վերջը, մենք կործանեցինք մեր ժողովուրդը մեր զանազան օրինատացիաներով...»⁶²:

Դիւանագիտութիւնը համարելով «ամենասրիկայական գործն», նրա զոհ հայ ժողովրդի ցաւակիր բանաստեղծը, նամակներից մէկում, վշտախառն գրում էր «...Կարս, Իգդիր, Նախիջեւան...վերերն են հոգուս մէջ. Անիմ քանդում են թիւրքերը, հօգօր Ռուսիան մի ցուրտ խօսք չի ասում թիւրքերին. ինձ թւում է, որ Լեւոնը Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի պէս թփում է մեզ վրայ, իրրել թոյլերի վրայ, եւ արիւնարբու էնուեր-ֆեմալին է ընկերակցում...եւ հիասթափուած եմ. եւ վերջապէս Ռուսաստանում այլեւս սօցիալիզմ չկայ, ամէն բան կայ, բայց ոչ սօցիալիզմ. ցաւում եմ, որ սա ցաւ պիտի պատճառէ քեզ. ի՞նչ անեմ, ինձ շատ մեծ ցաւ է. վիժեց քոյշելիզմը...», - 1922թ., Վենետիկից Սիմոն Յակոբեանին գրում էր Ա. Իսահակեանը⁶³:

Հայկական հարցի, դրա լուծման ուղիների մասին հետաքրքրական տեսակէտներ է ներկայացնում Ռուբէնը (Մինաս Տէր Մինասեան)՝ «Հայաստան միջցամաքային ուղիներու վրայ» աշխատութեան մէջ: Մինչ բուն հարցին մօտենալը, հեղինակը միջազգային յարաբերութիւնների ընդհանուր պատկերի վրայ զարգացնում է այն միտքը, որ Հայաստանը գտնուելով միջմայրցամաքային ուղիների վրայ, վեր էր ածուել միջազգային բարդ յարաբերութիւնների թատերաբեմի՝ սկսած իր գոյութեան առաջին օրուանից, երբ կրելով հարեւան հօգօր տէրութիւնների հարուածները, ի վերջոյ դարձաւ նաեւ «Սիպիրական ճամբով» արշաւող քոչուորական ցեղերի ասպատակութիւնների ասպարէզ: Այնուհետեւ ձեւաւորուեցին Արեւելք, Արեւմուտք շահերը եւ «Եւրոպան կը ձգտի դէպի Արեւելք տարածուելու», իսկ Ասիան «Դէպի Արեւմուտք: Ինչպէս երկու հակառակ հոսանքներ»⁶⁴:

Ահա այդ խաչմերուկում գտնուող Հայաստանը բզկտում էր աւարառուական ցեղերի ասպատակութիւններից, «Բայց երբ Պա-

⁶² ԻՍԱՀԱԿԵԱՆ Ա.Ի., Նամակներ, Ժնև, 1996, էջ 292:

⁶³ Նոյն տեղում, էջ 74:

⁶⁴ ՌՈՒԲԵՆ, Հայաստանը միջմայրցամաքային ուղիների վրայ, Բէյրութ, 1948, էջ 5:

միայամիզմ, Պանթուրֆիզմ գաղափարները գերակշռող եղան քան աշխարհագրական ըմբռնումները, սահմանները խեղաթիւրուեցան աշխարհակալ միտումներով: Աւելին, արիւնահեղ մրցակցութիւններ, ոչ միայն Անատոլիի շրջակայ երկրները մեռելու էան դատապարտուեցան, այլեւ եղան պատմառ անոր քայլման...»⁶⁵:

Այս ժողովրդակործան հակամարտութիւնների մէջ աւելի էր մեծանում Հայաստանի արժէքը, որովհետեւ «Հայաստանը իր բարձրութեամբ Մերձաւոր Արեւելքի առաստաղն է, որուն գմբէքն է Բարձր Հայքը, մայրաքաղաք Երզրումով, որ կը կեդրոնացայ ինչպէս Արեւմուտքի, նոյնպէս եւ Արեւելքի բոլոր ուղիներու հանգույցը»⁶⁶:

Ստեղծելով իր տեսութեան հանգրուանը, Ռուբէնը ողբերգութիւններով լի Հայկական հարցը բաժանում է 10 «արարների»՝ տալիս դրանց բնութագրումները, իւրովի մեկնաբանութիւնները: Դրանք եզրակացութիւններ են, տեսակէտներ, որոնք, թէեւ դիտելով պատմական իրադարձութիւնների տեսանկիւնից, վիճելի են, սակայն իրենցից մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում:

Հայ ազատագրական շարժումներին հատորներ է նուիրել Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանցը: Ուսումնասիրութիւնը լի է անակնկալ մտքերով ու եզրակացութիւններով, գնահատականներով: Զարգացնելով իր տեսակէտները՝ է. Գեղամեանցը Հայկական հարցը բաժանում է 7 շրջանների:

է. Գեղամեանցի հատորաշատ աշխատութիւնն իր ընդունելի եւ անընդունելի տեսակէտներով, եզրակացութիւններով, առատ փաստերով նշանակալի ներդրում է Հայկական հարցին ճանաչողականութիւն բերելու ասպարէզում⁶⁷:

Հայկական հարցի, ազատագրական շարժումների, հասարակական, քաղաքական հոսանքների, կուսակցութիւնների եւ յարակից այլ հարցերի առթիւ քննադատական, մերժողական դիրքորոշումներով առատ են Դ. Անանունու աշխատութիւնները:

⁶⁵ Նոյն տեղում, էջ 39:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 40:

⁶⁷ ԳԵՂԱՄԵԱՆ ԵՂ., Հայ ազատագրական շարժումները ԺԹ դարում, Բաքու, 1915, Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում Հայկական հարցի եօթերորդ շրջանը, Բաքու, 1916:

Յետադարձ հայեացք գցելով հայոց պատմութեան խորքերը, Դ. Անանունը գտնում է, որ հայ կեանքն այլանդակուեց յատկապէս թուրք-պարսկական պատերազմների չրջանում, որը արգելակիչ դեր խաղաց միասնական ծրագրի մշակման, գաղափարական միակամութեան, Հայկական հարցի լուծման ուղիների որոնման գործում: Բացի այդ, «...մի ազգ դժբախտութիւն ունենալով կորցնելու իր քաղաքական անկախութիւնը, միեւնոյն ժամանակ ստորադասուում է իրենից կուլտուրապէս բարձր կամ ցածր նուաճողին»⁶⁸:

Հետեւում է հայութեան՝ «Տէր, պաշտպան ունենալու փափագը» եւ այն չգտնելով, վերադարձ է կատարում դէպի սեփական կարողութիւնները, որտեղ առաջնակարգ դեր էր կատարելու մտաւորականութիւնը: Քննադատական խօսքեր ուղղելով մտաւորականութեանը, Դ. Անանունը նշում է, որ այդ շարժումը թէեւ տուեց «ընտրեալների ողջակիզում», բայց «քաղքենիներից հերոսներ պատրաստել եւ նրանց ոգորումով պայծառ արեւ քանալ հայութեան գլխին» չյաջողուեց, որովհետեւ քաղքենին «անշարժ մնաց»: «Սահմանափակութիւնը նրան առաջնորդում էր դէպի մուրացիկ վիճակ» եւ դրա անխուսափելի արդիւնքը՝ «Հայքենիքն էլ պիտի մուրացուէր»⁶⁹:

Շարժման անյաջողութիւնը հիմնականում բարդելով մտաւորականութեան վրայ, «սահմանի այն ու այս կողմը» գոտեմարտի ելաժների ջանքերը պսակուեցին անյաջողութեան այն պատճառով, որ իմաստութիւնից զուրկ էր քաղքենին, աւելին՝ չէր «վերամկրտուել հայ հոգին»⁷⁰:

Հայ-ռուսական յարաբերութիւնների, հայերի ռուսական կողմնորոշման, հայ-ազատագրական շարժումների ուսումնասիրութեանն է նուիրել իր մեծարժէք աշխատութիւնները ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանը: «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմութիւնից», «Հայ-ռուս օրիննացիայի ծագման խնդիրը», իսկ մինչ այդ, 1914թ. Միւնխենում տպագրած «Իսրայէլ Օրին եւ հայերի ազատագրութեան խնդիրը» գրքում հիմնաւորում է այն տեսակէտը, որ ռուսական կողմնորոշումն

⁶⁸ Ա.ՆԱՆՈՒՆ Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 1, Բաքու, 1916, էջ 2:

⁶⁹ Նոյն տեղում, հ. 2, էջմիածին, 1922, էջ 246:

⁷⁰ Նոյն տեղում:

ունի դարերի պատմութիւն, սակայն հայ հասարակութեան ոչ բոլոր խաւերն էին բաժանում միմիայն Ռուսաստանին ազատագրութեան յենարան ճանաչելու գաղափարը:

Հայ ազգային գաղափարախօսութիւնը մինչեւ կոռւ ուսմունք դառնալը, յաղթահարել է քաղաքական մտքի մի շարք բարդոյթներ, ընձիւղուել դարերի միջով եւ վերածուել ազատագրական գաղափարախօսութեան: Ազգային գաղափարախօսութեան ակունքներն են քննարկում ու վերլուծում մեծանուն պատմաբանի երկհատորանոց «Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան» աշխատութիւնը: Առաջին գրքում վերլուծելով հայ ազատագրական լեզենդի սոցիալական միջավայրը՝ Ա. Յովհաննիսեանն առանձնացրել է հայ իրականութեան տարբեր խաւերի վերաբերմունքը ազատագրական մտքին ու շարժումներին⁷¹:

«Նալբանդեանը եւ նրա ժամանակը» երկհատորանոց աշխատութիւնը, Նալբանդեանագիտութեան հանրագումարը լինելով, առաջին անգամ վեր է հանում այն ժամանակահատուածի առաջնային յատկանիշները, որոնց ազդեցութեան տակ ձեւաւորուեցին Նալբանդեանի փիլիսոփայական, տնտեսագիտական ու հրապարակախօսական գաղափարները: Ընդգծելով Մ. Նալբանդեանի տեղը հայ հասարակական-քաղաքական մտքի պատմութեան մէջ, Ա. Յովհաննիսեանն աւելի ընդգրկուն է ներկայացնում Մ. Նալբանդեանի դիրքորոշումները հայ ազատագրական շարժումների ու գաղափարախօսութեան նկատմամբ: Քարոզելով զինուած պայքարի գաղափարը, որպէս ազատագրութեան հասնելու միակ ճանապարհը⁷²:

Հայկական հարցի բաղկացուցիչ մաս ազգային ազատագրական շարժումների ուսումնասիրութեանն են նուիրուած Յ. Անասեանի երեք «Ստեփանոս Սալմաստեցի», «17-րդ դարի ազատագրական շարժումները Արեւմտեան Հայաստանում», «Թուրքական տիրապետութիւնը Հայաստանում 17-րդ դարում» աշխատութիւնները:

Առաջինը թէեւ նուիրուած է Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի գործունէութեանը, սակայն հեղինակը քննութեան է

⁷¹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ա., Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Հ. Ա., 1957:

⁷² ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ա., Նալբանդեանը եւ նրա ժամանակը, գիրք Ա, Բ, Երեւան, 1955, 1957:

ենթարկում ժամանակաշրջանի իրադարձութիւնները եւ այդ պատկերից բխեցնում կաթողիկոսի հայեացքները: Ընդունելով ակադեմիկոս Ա. Յովհաննիսեանի այն միտքը, որ նշուած ժամանակահատուածում հայերի ազատագրական ծրագրերը կապուած չէին միմիայն Ռուսաստանի հետ, այլ՝ «Մերձաւոր Արեւելքում քաղաքական նպատակներ հետապնդող եւրոպական պետութիւնների» հետ, Յ. Անասեանը այդ փաստը հաստատում է բազմաթիւ օրինակներով, մանրակրկիտ վերլուծում է կաթողիկոսի գործունէութիւնը եւ ընդգծում, թէ թէեւ հայոց հովուապետն իր հպատակութիւնը յայտնեց պապին, սակայն դա վերջնական վճիռ չէր, այլ միջոց Հայկական հարցը բորբոքելու համար եւ երբեք չունեցաւ քաղաքական շարունակութիւն: Անդրադառնալով «Դաշանց քուղթ» փաստաթղթին՝ Յ. Անասեանն այն միտքն է յայտնում, թէ դրա ծնունդը պէտք է կապել Կիլիկիայի հայկական թագաւորութեան լատինամոլ ուժերի հետ, որակելով որպէս «գրական կեղծիք»⁷³:

Վերլուծելով հետաքրքրութիւն ներկայացնող ժամանակահատուածում Եւրոպա մեկնած Հայկական պատուիրակութիւնների, առանձին անհատների ծրագրերը, Յ. Անասեանը յանգում է այն կարծիքին, որ դրանք դատապարտուած էին անյաջողութեան, որովհետեւ քաղաքական ասպարէզ ոտք դրած հայ գործիչները դեռեւս հասու չէին կանխատեսելու տէրութիւնների քաղաքականութիւնը եւ փորձում էին նուիրուածութեան ճանապարհով համակրանք ու գործակցութիւն ձեւաւորել ի նպաստ Հայկական հարցի:

Եւրոպացի հեղինակներից Հայկական հարցը առաւել հանգամանալից վերլուծել է Բ. Գեմբարսկին: Մեծ հայապաշտպանը նախ բացատրում է թէ ի՞նչ է Հայկական հարցը, ճշգրտում նրա բովանդակութիւնը՝ «հոդ՝ առանց մարդկանց եւ մարդիկ առանց հոդի» կամ՝ «Մարդկութիւնը բիրիական Եհովայի նման թուրք ժողովրդին հարց է տալիս. «Ի՞նչ արեցիր քո Աբել եղբորը»⁷⁴: Այսինքն, պէտք է ենթադրել, որ Բ. Գեմբարսկին Հայկական հարցի ծագումը տանում է պատմութեան խորքերը, իսկ միջազգային հնչեղութիւն ստանալը կապում կարմիր սուլթանի հայկուլ քաղաքականութեան հետ:

⁷³ Ա.ՆԱՍԵԱՆ Ե., Ստեփանոս Սալմաստեցի, Երուսաղէմ, 1981, էջ 57:

⁷⁴ ԳԵՄԲԱՐՍԿԻ Բ., Նամակներ աշխարհին, Երեւան, 1990, էջ 75, 38, 39:

«...Իմ հին թուրք ծանօթին» նամակում գրում էր, որ 1915թ. ցեղասպանութիւնը «մարդկային գործունէութեան մէջ առաջին ծրագրուած» աշխատանքի «կազմակերպում» էր «գիտական հիմքի վրայ յենուած, ամբողջ ժողովրդի ոչնչացում»⁷⁵:

Այդ ճանապարհով ոչնչացուեց «երեւ միլիոն հայեր, որը կազմում էր ամբողջ ժողովրդի 60 տոկոսը»⁷⁶: Այնուհետեւ, հաշուարկ կատարելով՝ Բ. Գեմբարսկին յայտնում է, որ «1915-1920թթ. երեւ միլիոն սպանուածները 40 տարուայ ընթացքում կը դառնային վեց միլիոն չծնուածներ»⁷⁷: Քննադատելով այն միտքը, թէ կատարուածը, ինչպէս որակում էին թուրքական իշխանութիւնները՝ ապստամբ հայերի նկատմամբ գործողութիւններ են եղել, Բ. Գեմբարսկին մերժում է այդ անհիմն վարկածը եւ պնդում, որ ցեղասպանութիւնը իրականացւում էր կայսրութեան ողջ տարածքում, պետականօրէն:

Այնուհետեւ, անդրադառնալով Հայկական հարցի դիւանագիտական ասպարէզին, Բ. Գեմբարսկին ընդգծում է, որ չնայած «շահագրգիռ» մօտեցումներին, այնուամենայնիւ լուծումներ չեն գրանցուել, եւ մի ամբողջ ժողովուրդը զրկուել է իր Հայրենիքում ապրելու հնարաւորութիւնից, որ թուրքերի զաւթած տարածքը հայութեան Հայրենիքն է եղել «դեռեւս այն ժամանակ, երբ աշխարհիս երեսին չկային ոչ անգլիացիներ, ոչ ֆրանսիացիներ, ոչ լեհեր, ոչ ռուսներ եւ ոչ նոյնիսկ հռոմէացիներ...»⁷⁸:

Օտար հեղինակներից, Հայկական հարցին մասնաւորապէս եւ Հայոց Մեծ եղեռնին յատկապէս, աշխատութիւններ ու յուշեր են նուիրել Ա. Բեֆիկը, Հ. Բարբին, Զ. Բրայսը, Վ. Բրիւսովը, Հ. Ադամս Գիբսոնը, Տ. Լենկը, Ռ. Պինոնը, Ֆ. Նանսենը, Մեւլուան Զադէ Ռիֆաթը, Ֆ. Վերֆելը, Ֆայել էլ Հոուսէյնը, Մ. Եակոբսոնը, Մանդելշտամը, Մ. Ամֆիտիատրովը, էդ. Բեւմշտայնը, Պ. Ռորհբախը, Գ. Ֆիրբիւխերը, Ա. Վէգները, Ի. Ռայնին, է. Գրանտը, Բ. Բորեանը, Յ. Ալբաշեանը, Ա. Օհանջանեանը եւ բազմաթիւ սփիւռքահայ եւ օտարազգի այլ հեղինակներ:

Ստեղծուած մեծածաւալ գրականութիւնը, սակայն, անկարելի համարելով ենթարկել առանձին-առանձին վերլուծութեան,

⁷⁵ Նոյն տեղում, էջ 7:

⁷⁶ Նոյն տեղում:

⁷⁷ Նոյն տեղում, էջ 8:

⁷⁸ Նոյն տեղում, էջ 120:

նշենք, որ նրանց գերակշռող մասը անդրադառնում են եւրոպական տէրութիւնների ու Ռուսաստանի կրաւորական, հանդուրժողական, խրախուսական քաղաքականութեան բացայայտմանն ու քննադատութեանը, որոնք էլ հիմք հանդիսացան «մեծ մարդապալմ» սուլթան Համիդի ու նրա գործի շարունակող երիտթուրքական ոճրագործ վարչակարգի համար իրականացնելու Հայկական հարցը լուծելու իրենց դիւային ծրագիրը:

Հրապարակի վրայ գտնուող եւ գիտական շրջանառութիւն մտած այդ մեծաքանակ գրականութիւնը դժբախտաբար վերլուծելու հնարաւորութիւն չի տալիս յօդուածի շրջանակները, ուստի առանձնացրել ու օգտագործել ենք առաւել դիպուկ մեկնաբանութիւններով աշխատութիւնները, որոնք, մեր կարծիքով, ուշադրութեան արժանի տեղեկութիւններ ու գնահատականներ են պարունակում հետաքրքրութիւն ներկայացնող հարցի վերաբերեալ:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Հ. Լեւիսիուսը կեանքի նպատակներից մէկը դարձրեց հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը, անգիջում պայքար ծաւալեց թէ՛ Գերմանիայի, թէ՛ եւրոպական միւս տէրութիւնների խաբէկանքների նկատմամբ⁷⁹:

Հայկական հարցի, հայ-թուրքական յարաբերութիւնների, թուրքական վտանգի, պանթուրքիզմի գաղափարախօսութեան եւ այլ յարակից հարցերի առանձնայատուկ մեկնաբանութիւնների ժողովածու է Շ. Նաթալիի «Թուրքերը եւ մեմֆ» գիրքը⁸⁰:

«Հայ վշտի ու պայքարի երգիչ» էին անուանում նրան, ի վերուստ գրողի առաքելութիւն ստացած Ա. Ահարոնեանին, որը Հայրենիքի պահանջով դարձաւ հարազատ ժողովրդի շահերի պաշտպանը:

1907թ. սկսւում է Ա. Ահարոնեանի դիւանագիտական գործունէութիւնը: Խրիմեան Հայրիկի յանձնարարութեամբ նա ընդգրկւում է Հոլանդիայի Լա Հէյ քաղաք մեկնող պատուիրակութեան մէջ, որը մտադրութիւն ունէր այնտեղ գումարուելիք խաղաղութեան համաժողով ներկայացնել Հայկական հարցը եւ օժանդակութիւն ստանալ ազատագրութեան հարցում: Պատուիրակութիւնը յաջողութիւն չի ունենում:

⁷⁹ ՀԱՅՐՈՒՆԻ Ա., Յովհաննէս Լեւիսիուսի առաքելութիւնը, Երեւան, 2002, էջ 247:

⁸⁰ ՆԱԹԱԼԻ Շ., Թուրքերը եւ մեմֆ, Երեւան, 1992:

Ականատես ու մասնակիցը լինելով ցարիզմի ու սուլթանիզմի հակահայկական քաղաքականութեան ու նրանց դէմ միջոցառումների իրականացման, Ա. Ահարոնեանի համար գաղտնիք չի մնում, որ երկու բռնակալներն էլ, միասնաբար, ձգտում են ասպարէզից վերացնել այնքան անհանգստութիւն պատճառող Հայկական հարցը:

Ժամանակները փոխում են, սակայն Հայոց նկատմամբ պատմութիւնը կրկնում է, «տանջուած քամրորդը» շարունակում է իր երթը, ձգտում սեփական ուժերով լուծել իր գերխնդիրը, բայց՝ «Հագար ձեռներ կան հոգուդ հսկայ թռիչքը սանձելու, հագար նիրամենք՝ ագատութեան քն վարդազոյն երազները բըզբընելու»⁸¹: Եւ այդքանից յետոյ, զարմանալի է, անհաւատալի, որ միայնակ պայքարելով ոսոխների դէմ, հայութիւնը երբեք, կարծես, չի ընկճում եւ նպատակամղուած գնում է դէպի իր Հարցի լուծումը:

1919թ. յունուարին, որպէս Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան ղեկավար, Ա. Ահարոնեանը մեկնեց Փարիզ, որպէսզի այնտեղ պաշտպանի Հայկական հարցը, որպէսզի հնարաւոր լինի քոչուորական լաւայի տակից սուրս բերել հայութեան պատմական Հայրենիքի գոնէ մի մասը: Յոյսեր էին սըրանք, յոյսեր, որոնք իրականութեան վերածելու համար Ա. Ահարոնեանը բազում հանդիպումներ ունեցաւ տէրութիւնների պատասխանատուների հետ, յուսալքուեց ու ոգեւորուեց, երազեց ու տառապեց, արցունքները թանաք դարձրած գրեց, գրեց ու սոսկաց ամբողջ ճշմարտութիւնը պատմել իր ժողովրդին՝ «Երանի նրանց, որոնք չգիտեն այն՝ ինչ եւ գիտեմ»⁸²:

Գաղտնիքները շատ են: Դրանք կարմիր բռնատիրութիւնը թաքցնում էր հայութիւնից, բայց մոռանում, որ Ա. Ահարոնեանի ոսկէ գրիչը որպէս պատգամ իր ժողովրդին է թողել պատմական ճշմարտութիւն, ճշմարտութիւն, ոչ թէ վհատուելու, այլ պատմութիւնից դասեր առնելու համար: Այդպիսի պատգամների խտացումն է «Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան» գիրքը: Այն Հայկական հարցի 1919-1927թթ. տարեգրութիւնն է, միջազգային ասպարէզում մղուած դիւանագիտական պայքարի հանրագումարը⁸³:

⁸¹ Ա.ՀԱՐՈՆԵԱՆ Ա., Ագատութեան քանապարհիմ, Վենետիկ, 1996, էջ 94:

⁸² Ա.ՀԱՐՈՆԵԱՆ Ա., Ահագանգ, Երեւան, 1993, էջ 5:

⁸³ Ա.ՀԱՐՈՆԵԱՆ Ա., Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան, Երեւան 2003:

Հայրենիքի գաղափարը Ե. Չարենցի համար դարձավ «կապուտաչեայ Հայրենիք», որոնումների մի հսկայ դաշտ, որտեղ իրար էին միախառնում դարաւոր դառն անցեալն ու ողբերգական ներկան: Ե. Չարենց բանաստեղծը իր սերնդակիցներից շատերի նման զգաց այն դաւը, որով մեծ տէրութիւններն ու Ռուսաստանը իրականացնում են հայութեան նկամամբ ու հիասթափուած հեռացաւ կամաւորական խմբից: Բայց այդ քայլը չազատեց նրան իր երազած Հայրենիքը փնտրելուց, նա մերժում էր արիւնլուայ Հայրենիքի գաղափարը, բանաստեղծը տեսնում էր այն չարագործութիւնների հետեւանքները, որով աշխարհի երեսից հեռացւում էր իր հինաւուրց ժողովուրդը: Սակայն յոյսը չէր մեռնում եւ Ե. Չարենցը սպասում էր՝ «Դու մի գիշեր պիտի իջնե՛ս, պիտի գաս»:

«Որք, արմաքամ ու աւերակ» Հայրենիքի գլխին նոր վըտանգ էր կախւում: Մեծերի թողտուութեամբ, դարաւոր թշնամին 1918թ. նոր յարձակում էր նախաձեռնել, հայոց վիշտը կրկնապատկւում էր, Հայրենիքի սիրոյ գերի բանաստեղծը անկարող էր չարձագանքել վտանգին եւ ծնունց «Մահուան տեսիլը»: Աչքերը յառած անցեալին, «ապագայի մոյլգը նստած» Ե. Չարենցը կերտեց «Դանթէականը», Հայոց վշտի ու մորմոքի կոթողը: Ու, թէեւ, տուրք տալով զգացմունքներին Ե. Չարենցը երբեմն ծաղրի ու անարգանքի է ենթարկւում ժամանակի գործիչներին, սակայն դրանք արդիւնքը լինելով Հայրենիքի նկատմամբ տածած անսահման սիրոյ, բանաստեղծը մոռանում էր, որ Հայոց ողբերգութիւնը ոչ թէ ներսի ուժերի, այլ դրսի դաւադիր քաղաքականութեան արդիւնքն են:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Միքայէլեանի «Հայկական Հարցը եւ հայերի ցեղասպանութիւնը Թուրքիայում (1913-1919)» Երեւան, 1995, ռուսերէն, «Հայոց ցեղասպանութիւնը գերմանացի դիւանագետների հաղորդագրութիւններում», Երեւան, 1995, «Գերմանացի դիւանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին», Երեւան, 1997, Գ. Ֆիրբելիսերի՝ «Հայաստան 1915» գրքի առաջաբանը, Երեւան, 1991, աշխատութիւնները նոր լոյս են սփռում 20-րդ դարի մեծագոյն յանցագործութեան բացայայտման ու հիմնաւորման խնդրում, ընդգծում Գերմանիայի մեղսակցութիւնն ու այդ ահաւոր մարդակերութեան գործում:

-Մենք համոզուած ենք, որ ժողովածուում տեղ գտած փաստաթղթերն ու նիւթերը կը համոզեն անկողմնակալ ընթերցողին եւ ուսումնասիրողներին այն ահաւոր ճշմարտու-

թեան մէջ, որ երիտօրբերի պանթուրփիստական ֆաղափա-
նութեան արդիւնքում ոչնչացուեց մի ամբողջ ժողովուրդ՝ ա-
րեւմտահայութիւնը, իսկ նրանց հայրենիքը՝ Արեւմտեան Հա-
յաստանը 9/10 մասը վերածուեց աւերակների,- գրում է Վ.
Միքայէլեանը⁸⁴:

Կատարելով պատմական անդրադարձ, հեղինակը ապացու-
ցում է, որ հայերի ցեղասպանութիւնը չպէտք է դիտել որպէս
1915թ. ողբերգական իրադարձութիւններ, այլ դրա արմատները
խրուած են խորը անցեալի մէջ եւ 1915-1922թթ. կիզակէտն էր
հայութեանը ոչնչացնելու քաղաքականութեան: Պանթուրփիզմը
առաջին հարուածը հասցրեց արեւմտահայութեանը այն պարզ
պատճառով, որ հայերը օսմանացման քաղաքականութեան ամե-
նաուժեղ դիմադրողներն էին⁸⁵:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Խուրշուդեանը «Հայոց ցեղաս-
պանութեան պատճառները եւ պատմական դասերը», «Հայկա-
կան հարցը», Երեւան, 1995, «Հայ ազգային գաղափարախօսու-
թիւնը», Երեւան, 1999, ուսումնասիրութիւններում նորովի է մո-
տենում խնդրոյ առարկայ հարցին: Առաջին յօդուածում եւ ժո-
ղովածուի առաջաբանում Լ. Խուրշուդեանը հանգամանալից ներ-
կայացնում է Հայոց ցեղասպանութեան պատճառները եւ յան-
գում այն հետեւութեանը, որ Հայոց ցեղասպանութեան պատ-
ճառները դեռեւս վերացողած չեն՝ «Պանթուրփիզմի խնդիրները
մնում են նոյնը՝ հայկական սեպի վերացումը եւ Մեծ Թուրա-
նի պետութեան ստեղծումը: Պանթուրփիզմը եղել է եւ կայ,
դա այն վտանգն է, որի մասին մշտապէս ահազանգում է Հա-
յոց Անյոյի Զանգակատունը:

Հայոց մարտավարական եւ ռազմավարական ծրագրերի
առանցքային խնդիրը պէտք է լինի պանթուրփիզմի վտանգին
դիմակայելու համակարգի ստեղծումը»⁸⁶:

«Հայկական հարցը» աշխատութեան հիմնական նպատակը
ազգային գերխնդրի պատմութեան համառօտ շարադրանքը լինե-
լով հանդերձ, առաջին անգամ գիտականօրէն վերլուծում է

⁸⁴ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Վ., «Հայկական հարցը եւ հայերի ցեղասպանութիւնը Թուր-
փիայում (1913-1919)», Երեւան, 1995, էջ 16:

⁸⁵ Նոյն տեղում:

⁸⁶ Հայոց ցեղասպանութիւն, պատճառներ եւ դասեր, ժողովածու, Երեւան, 1995,
էջ 8, տես՝ Լ. Խուրշուդեանի յօդուածը:

Հայկական հարցը, տրոււմ է նրա սահմանուումը եւ կատարուում է փուլերի բաժանում:

«Աշխատութեան սահմանափակ ծաւալը մեզ հնարաւորութիւն չի տալիս մանրամասն վերլուծելու, պարզաբանելու, բնութագրելու Հայկական հարցի պատմութեան բոլոր փուլերը, ենթափուլերը եւ, որ ամենակարեւորն է, այդ փուլերի բովանդակութիւնը կազմող բոլոր անհրաժեշտ իրադարձութիւնները», որոնք իր իսկ խոստովանութեամբ վերջնական չի համարում⁸⁷:

Հայրենիք-սփիւռք յարաբերութիւններին, Հայրենադարձութեանը, սփիւռքի քաղաքական գործունէութեանը, Հայրենիքի նկատմամբ պատասխանատուութեան, նրա վերաշինութեան խնդիրներին արժէքաւոր ուսումնասիրութիւններ են նուիրել Կ. Դալլաքեանն ու Յ. Մելիքսէթեանը: Հայոց ցեղասպանութեան պատմութեան, Հայկական հարցում մեծ տէրութիւնների քաղաքականութեան, ազատագրական շարժումների լուսաբանմանն են նուիրուած Ս. Ստեփանեանի, Է. Սարգսեանի, Կ. Սասունու, Ս. Վրացեանի, Ռ. Սահակեանի, Մ. Կարապետեանի, Լ. Բարսեղեանի, Ս. Զոլեանի, Ա. Համբարեանի, Հ. Ղազարեանի, Ռ. Յովհաննիսեանի աշխատութիւնները:

Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախօսութիւնը եւ թուրք-Հայկական յարաբերութիւնները յատուկ ուսումնասիրութեան են ենթարկուել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Սիմոնեանի կողմից: Վերլուծելով թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախօսութիւնը, Հ. Սիմոնեանը իրաւացիօրէն պնդում է, որ նրա յետադիմական հայեացքների խորացմանը մեծապէս նպաստեցին երիտթուրքերը⁸⁸:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Աւետիսեանի աշխատութիւնը՝ «Հայկական հարցը 1918թ.» նշուած ժամանակահատուածի ամբողջական նկարագիրը հանդիսանալով, միաժամանակ այդ բախտորոշ մէկ տարուայ մանրակրկիտ վերլուծութիւնն է⁸⁹:

- Դաշնակից տէրութիւնների չհատուցած պարտքը հայ ժողովրդին չի կորցրել իր պատմական վաղեմութիւնը, գրում

⁸⁷ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ Լ, Հայկական հարցը, Երեւան, 1995, էջ 4:

⁸⁸ ՍԻՄՈՆԵԱՆ Հ., Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1991:

⁸⁹ ԱԻԵՏԻՍԵԱՆ Հ., Հայկական հարցը, 1918թ., Երեւան, 1997:

է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գալոյեանը «Հայաստանը եւ մեծ տէրութիւնները 1917-1923թթ» գրքում⁹⁰:

Վերլուծուած սկզբնաղբիւրներն ու գրականութիւնը առատ նիւթ տալով Հայկական հարցի, նրա ծագման եւ յատկապէս միջազգայնացման առթիւ, տեսադաշտից դուրս են թողել նրա ձեւաւորման, պատմական զարգացման հետ կապուած հարցերը: Ճիշտ է, փորձեր են արուել նաեւ փուլային բաժանման, պատմա-քննական վերլուծութեան ենթարկել խնդիրը, սակայն հեռու մնալով Հարցի ծագման ակունքներից այդ փորձերը հիմնաւորումներ չեն ստացել եւ մնացել են որպէս սեփական տեսակէտներ:

Այս առումով էլ, շարադրանքի ընթացքում պարտադրուած ենք եղել յաղթահարել բազմաթիւ դժուարութիւններ մեր տեսակէտները հիմնաւորել ենք զուտ պատմական նիւթերի, պատմական օրինաչափութիւնների վրայ, որոնք մէկ անգամ եւս ապացուցում են, որ Հայկական հարցը լինելով Հայոց պատմութեան անքակտելի մասը, սնոււմ ու զարգացման հնարաւորութիւն էր ստանում նրանից, վերածուելով ազգային գաղափարախօսութեան հիմքի, նրա կենարար երակի:

Ուսումնասիրողներից շատերը կռահելով այս անփստելի ճշմարտութիւնը, անդրադարձել են ազգային գաղափարախօսութեան բաղկացուցիչ մասեր հանդիսացող Հայրենիք, ազգային, պետական մտածողութիւն հասկացութիւններին, բայց, դժբախտաբար, սահմանափակուել են միայն հպանցիկ բնորոշումներով, յիշատակումներով:

Հայկական հարցի գիտական ուսումնասիրութիւնը այսօրուայ հրատապ, հրամայական պահանջն է, որովհետեւ անմշակ թողնելով այն, անտեսում ենք քաղաքական հայագիտութեան անհրաժեշտութիւնը, գործունէութեան ընդարձակ ասպարէզ թողնելով պանթուրքիզմի մարդատեաց գաղափարախօսութեան գոյատեւման համար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿԵԱՆ

⁹⁰ ԳԱԼՈՅԵԱՆ Գ., Հայաստանը եւ մեծ տէրութիւնները 1917-1923թթ., Երեւան, 1999:

Historiography of the Armenian Question

HOVHANNES ZATIKYAN

(summary)

The Armenian Question has been kept on the shelves of the international diplomacy for many centuries, without receiving its own righteous recognition or solution, but has been subjected to many exploitations.

The Armenian Question created multi-level interest among Armenian linguists and historians; but should also invite non-Armenian historians, politicians and analysts.

This article intends to present valuable view points, so that the reader might have a clear understanding of the complex issues that arises within the Armenian Question.